

ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿԻ ԱԼՒՐՄԸ

Բ. ՄԱՍ *)

ԱՄԸՆԵՂԻՆՆԵՐ ԵՒ ԿԵՆՏՐՈՆ

Միջանի խօսք Ջալալի ժողովրդի սննդի եւ նիսուկացի մասին

I

Իւրաքանչիւր մի երկրի ժողովրդի սնունդը կախուած է նոյն երկրի բերքից. նայելով թէ որքան բերրի է լինում նա, ըստ այնմ էլ լինում է ժողովրդի սնունդը: Ջալալիքը ունենալով ցուրտ և խիստ կլիմայ՝ զուրկ է ճոխ բուսականութիւնից: Նա տալիս է ժողովրդին միմիայն հացահատիկներ, և մասամբ բանջարեղէն, իսկ կենտրոնը (Ախալքալակ գետի ձորը, մինչև Կուրին խառնուիլը) մրգեր:

Ռոյոր երկիրը ծածկուած է արտերով, իսկ հարաւ-արևելեան լեռնային մասը հարուստ արօտատեղիներով. բայց ընդհանրապէս վերցրած՝ Ջալալիքի ամենագլխաւոր բերքը գարին է, ապա ցորենը, որոնցից թէ սնունդ է ստանում ժողովուրդը և թէ առատ տարին ծախում, իւր միւս կարիքները հոգում:

Հացահատիկներից չետոյ երկրորդ տեղը բռնում է անասնապահութիւնը: Դրան նպաստում է այն հանգամանքը, որ շրջակայքում, հարաւում և արևելքում ունի հարուստ արօտատեղիներ, ուր ոչ միայն տեղական գիւղերի խաշինքն է արածում, այլ և դրսից գալիս են թուռներ իրենց հօտերով, չովդարներ իրենց մսացու նախիրներով և այլն. բայց որքան այդ մասերն հարուստ են արօտներով, այնքան կենտրոնն աղքատ է, ուր կարելի է ասել արօտատեղի չկայ:

Սակայն ժողովուրդն օգտւում է կենդանիների միմիայն կաթից և ոչ մսից: Նա կաթից շինում է իւղ և պանիր, որ նրա միակ ուտելիքն է, բոցսերի ու բանջարեղէնների հետ. իսկ ձերացած, մսացու

*) Տես Ազգ. Հանդէս Գ. գիրք:

կենդանիներն արտահանում են Տփլիսի, Քուլթալիս, Բաթում, Ախալքալաք և այլն:

Երրորդ աղբիւրը ժողովրդի սննդի՝ պէտք է հաշուել բանջարեղէնները, որոնցով պէտք է ասած այնքան էլ նախանձելի չէ Քալալքը. բանջարանոցային բանջարեղէն համարեա չկայ, բացի կաղամբից, շափկամից և բազկից, իսկ մնացածները բոլորը դաշտային են, որ բաւականին շատ են:

Դաշտային բանջարեղէններից միմեայն մի քանիսը չարմարութիւն ունին չորացնելու ձմռան համար պահելու, միւսները գործադրում են այն ժամանակ, երբ նրանք կան:

Բանջարեղէնների ժամանակը մայիս, յունիս և յուլիս ամիսներն են:

Չորրորդ տեղը բռնում է սննդի համար՝ թռչնապահութիւնը, որ Քալալքում ամեն տեղ էլ միատեսակ է և նահապետական: Թռչուններն են հաւ, քիչ քանակութեամբ սագ, ապա հնդկահաւ և բադ: Ամենից շատ հաւ են պահում, շատ տուն կայ որ ունի մինչև 100 թև հաւ: Ժողովուրդը գործադրում է սննդի համար նրա ձուն, շատ սակաւ և միսը, իսկ մեծ մասամբ վաճառում է սալմաստեցի կամ տեղացի չարազարներին, որոնք արտահանում են գլխաւորապէս Տփլիսի:

Հինգերորդ տեղը պէտք է բռնէր մրգեղէնը, բայց սա այնքան սակաւ է երկրի ընդարձակութեան հետ համեմատելով, որ Քալալքը նմանում է անապատի իւր մի-երկու ովազիսներով: Միայն Խրթըզ աւանն է և մի երկու գիւղ, որոնք ունին պարտէզներ տաք ձորում, մատակարարում են ժողովրդին տանձ, խնձոր, թուփ, ծիրան, կեռաս, բալ և այլն: Ձմերուկը, սելը բերում է ուրիշ երկրներից: Սարերի գիւղերում միրգը կատարեալ է*):

Տասնեակ մարդիկ կան, որոնք իմացել են խաղողի անունը, բայց աչքով չեն տեսել, էլ թողած նուաք, թուզը, դեղձը և այլն:

Մի աղբիւր էլ սննդի համար պէտք է հաշուել մեղուաբուծութիւնը, որ շատ սակաւ և շատ աննախանձ:

Ահա դրանք են ժողովրդի սննդի աղբիւրները, որ մենք այժմ կտեսնենք նրանց գործադրութեան մանրամասնութիւնը:

Ժողովրդի ամենազլխաւոր (կշտացնող) ուտելիքը՝ հացն է. որովհետեւ երկիրն այնքան ցորեն չէ տալիս, որ բաւականութիւն տայ ժողովրդին կերակրուելու, այդ պատճառով գործադրութեան մէջ է և գարին: Միայն ամենահարուստ ընտանիքներն են, այն էլ իւրաքանչիւր գիւղում հազիւ 1—2, որ ուտում են զուտ ցորեն հաց, նրան-

*) Հիւանդն երբ մի հազուագիւտ ընն է ուզում, այդ ուզած բանը կոչում է կամակ:

ցից քիչ քաշը՝ խառը՝ ցորենը գարու հետ. իսկ ստորին խեղճ դասակարգը միմիայն գարի է։ Նա չունենալով կողմնակի առատ ուտեցիքներ՝ կշռանում է հացով. հասակ առած տղամարդը ուտում է 1/2 սոմառ հաց, որ թխած անում է մօտ 36 պ., ասել է ամիսը 3 պ. օրէնը չորս ֆունտս:

Ուտելը ոչ ժամանակ ունի, ոչ չափ. տեսնում էք որ երեխաներն ամբողջ օրը հացը ուռած փորերին դէմ տուած՝ մի գլուխ ծամում են. հէնց որ երեխան լաց է լինում, մաչը հաց է կտրում տալիս: Այդպիսի շարունակ ուտելը երեխաների առողջութեանը վնասում է, որոնք գետինների վրան քարշ գալով ամբողջ օրը՝ տանջւում են ստամոքսի, աղիքների հիւանդութիւններով կամ աչ տկարութիւնով:

Հացը թխում են թհդիրներում (թորոն). հացի տեսակները են, Բոյ Կոյ, Բեռ (ծակ բոկոն) և Բոլոր Դրանք պատրաստում են եկած խմորից, իսկ անեկ, պինդ խմորից պատրաստում են Բոլոր (բաղարջ). Եւ Կոյ (կողոլ և տափակ ձևով) և Բոլոր (խորանարդ ձևով), որը գործադրում են ճանապարհ գնալիս, Բաղարջն ու բակըմաթը այն չատկութիւնն ունին, որ նախ ուշ են չորանում, երկրորդ քանի քարթմնում են՝ այնքան համեղանում:

Կերակուրներից ամենից շատ գործադրուողը ուտիսին Բոլոր է, որի մասին Բոլոր Բոլորը Բաց տեղիս թան ապուրը (սպաս) ճիշտ այն տեսակ չէ, ինչպէս Արարատեան աշխարհինը, կամ բուն Հայաստանինը: Այնտեղ սպասը շինում են մաճնի թանից, հետը խառնում են բանջարեղէն և զանազան համեմունք, իսկ այստեղ շինում են հում սերի (սերուցքի) թանից, առանց համեմունքի ու բանջարեղէնների, միմիայն երեսին աճում են սոխառած (սոխը մանր ջարդած, իւղի մէջ տապակած): Առօրեայ ապուրների հետ ուտիսին զուգակից են միշտ մաճունը, պանիրը, իսկ պասին՝ զանազան բանջարեղէններ և արը դրած ուտելիքներ:

Աղքատ ընտանիքներն ընդհանրապէս պատրաստում են մի տեսակ (ապուր), իսկ միջակ և հարուստ ընտանիքները և՛ երկրորդ տեսակ, ինչպէս փաւ, խաշիլ, փոխինդ, չպուր, շիլայ, բանջար և այլն:

Բացի թանապուրից ու մախոխ ապրից ու անժուր ապրից՝ մնացած բոլոր կերակուրները փոփոխւում են տարուայ ժամանակների համեմատ, նայելով թէ երբ ինչ է գտնուում. կերակուրներ էլ կան, որ իրենց որոշ ծիսական ժամանակն ունին, օր. ինչպէս Կեռն Զատիկի և Մենդեան ճրագալոց երեկոներին, երբ կամ Գոլ Բոլոր՝ հոգուհացին (քելեխ) և այլն:

Սկսած մալիս ամսից գեղջուկի սնունդը կազմում են կաթնեղէնն ու բանջարեղէնը. ամառը բանջարեղէնն ու իւղեղէնը. աշունը իւ-

ղեղէնը (հացահատիկներից պատրաստած կերակուրներ). իսկ ձմեռը՝ ամառուանից հաւաքած, պահածը: Ամենից անտանելի է դառնում գիւղացու համար բարեկենդանից յետոյ երբ գալիս է մեծ պար, նա այդ պահոց օրերին ոչինչ չունի. ցամաք հաց և մախոխ ապուր. ոչ լոբի ունի, ոչ կարտոֆիլ. ոչ ուրիշ այմտիք, բացի մի երկու թուռչուց, որոնց մէջ ոչ մի սնունդ չկայ: Նրանք, որոնք կտահատ են ցանում և ձէթ ստանում, ձիթով շիլայ կամ փլաւ են պատրաստում, իսկ որոնք (մեծագոյն մասը) այդ չունեն՝ չբ են մնում: Քունչուլից ու գէլթունի ձէթից լողորովին գուրկ է գիւղական ժողովուրդը. բրինձ շատ քիչ բնտանիքներ են պահում, այն էլ հիւր եկած ժամանակ եփում. դրա վրայ աւելացրէք և այն նահապետական սովորութիւնը, որ միաժմի են պահում, այսինքն 24 ժամուայ ընթացքում հասակաւորներից շատերն ուտում են մէկ անգամ՝ ճաշու ժամից յետոյ, Փոքր ինչ օգնութեան են հասնում ամառուանից չորացրած պահած սեւեռ, շոգի, երբեմն էլ շիկի քոշուր, որ եփում են երկօրը, երեք օրը մի անգամ, որոնց մէջ սակայն էլի ոչ մի սնունդ չկայ, դրանց հետ և աղը դրած բուսեղէններն, ինչպէս Գեղ, Գե, Գե, Գե (բոխ) և թուռչուններն, ինչպէս կաղամբէ, բազկէ, շախկմէ և զմեցէ: Գեռ աւելի ողորմելի է դառնում նա զատկից յետոյ, երբ դաշտային պարապմունքներն սկսւում են, իւրը, պանիլը, արմտիքը միանգամայն սպառուած, միմիայն նա մնում է չոր հացի և մասամբ էլ նոր ծնած կովերի կաթի, դալի յոյսով, մինչև մայիս հասնելը:

Գեղջուկի կերակուրելու ժամանակները ձմեռն ու ամառը տարբեր են: Ամառը վաղ, մի քիչ հաց է վերցնում, գնում արտը, այնտեղ ժամը մօտ 8-ին նախաճաշ անում, սառը ջուրը վրէն խմում և աշխատանքը շարունակում մինչև կէսօր: ճաշ, ինչպէս իրենք են ասում. երբ գիւղից գալիս է «արտի հացը», որ լինում է ապուր, հետը երկրորդ տեսակ մի ուրիշ բան (կամ մածուն, կամ փլաւ) դրա հետ անբաժան պանիլը կամ որևէ աղը դրած բուսեղէն (պասին): Մէկ էլ ուտում է (ճաշից մնացած հաց ու պանիլը) երեկոյեան դէմ, իրենց ասածով իբրնստուան, մէկ էլ երեկոյեան տանը, քնելուց առաջ, իսկ երբ դաշտային պարապմունք չկայ՝ առաւօտ մօտ 9—10 ժամին, երբ թնդրի վրան հասնում է կերակուրը, մէկ էլ ճաշից ետքը, մէկ էլ երեկոյեան (ընթիւրիք):

Աւտում են տղամարդիկ առանձին մի խոնչալի շուրջ հաւաքած, իսկ կանայք նրանցից յետոյ իրենց երեխաներով ուրիշ խոնչալի շուրջ հաւաքուած: Ընդհանրապէս բոլորի համար աճուում է կերակուր մի ամանի մէջ և դրում խոնչալի մէջ տեղը, չորս բոլորքից գալները կամ բրդուճները տեղում են այնտեղ, ինչպէս բանուորների

մուրճերը, տակի մնացորդն առաջարկում է ընդհանրապէս ազապնե-
րին, աւելացնելով, «քաշէ առաջդ, քաշէ խտակ սրբէ, օր նշանլուդ
ըռունդ ըլլի»:

Կիւրացին առօրեայ ուրիշ ոչ մի խմիչք չունի, բացի սառնօրակ
ջրերից, որոնցով հարուատ է Քաւախէթի լեռնային մասը, իսկ դաշ-
տային մասը դրա հակառակ՝ առուի հասարակ ջրի անգամ նեղուծիւն
է կրում:

Առանձին կաթի գործածութիւն չկայ. կաթը գործ են ածում մի-
միայն երեխաներին տալու համար, ջրախառն, հետը երբեմն շաքար
խառնած:

Ամենաառատ ժամանակը Քաւախքի ժողովրդի սննդառութեան
բարիկենդանն է. բարիկենդանը, որի համար պահում են ամառուան
բարիքներից ամենաընտիրներն, ինչպէս սեր, մեղր դառւրմա, մորթում
են կենդանիներ, թռչուններ: Ընչտ են ասել թէ «բարիկենդան» փո-
րի կենդան». ուտում են, խմում. ուրախանում, սրտերը բաց անում
և կասես հոգեպէս ու մարմնապէս կազդուբում «սխտը դռնանի»
պաքին դիմաւորելու Բարիկենդանից յետոյ գալիս է չոր մեծ պասը
իւր ախալոճով, որ եօթը փետուր պար բռնած, քարը վրէն բաց երթի-
կից կախուած շարունակ օրօլում է օդի շարժողութիւնից և պասն
ուտողին քարի հարուածով սպառնում: Ամեն շաքաթ հանում են այդ
փետուրներից մէկը. վերջի շաքթին մնում է միմիայն մի փետուր և
սոխը (որի վրան շարած են փետուրները) այդ էլ ճրագայուցի երե-
կոյեան առնում են տան երիտասարդները, տանում կալերը և գազա-
նակների հարուածներով դէս ու դէն քշելով՝ ջուրը գցում, խեղդում,
«ագատում»:

Տեղումս խիստ ընդունուած է օղու գործածութիւնը. հարսա-
նիքներին, հրաւէրներին, քէֆերին օղին գործ է ածում անպէս,
ինչպէս ուրիշ երկրներում զինին: Խմում են չլուած: Լինում է հար-
սանիք, որ գնում է 15—20 վեդրօ օղի, համարեա 1/2 տակառ, որ
ասել է 600—800⁰. Բացի այդ, սովորութիւն է դարձել շատերի հա-
մար տանը շարունակ օղի պահելը և գործածելը: Երբ հարցնում են,
թէ ինչո՞ւ ես խմում, պատասխանում են, «մէկ-մէկ հատը, եա ջրխ-
տրկիլը ջանի համար լաւ է, մարդու սիրտը թամուզ կպահէ»: Լինում են
անչախիսիները, որ միանգամայն մոլի են: Յիշում եմ մի օղեմոլ, որ ա
պակու կտորն անգամ տեսնելիս ճռները դող էր ընկնում, թուբը
բերանից վազում: Օղու գործածութեան համար մեղադրում են իրա-
րու, սակայն ամեն մէկն առանձին թաքուն խմում է: Հետեւեալ
պատմուածքը ցոյց կտայ դրա պատկերը:

Լինում են երեք եղբայր, իրարու դատապարտում են խմելու համար և մէկգմէկու հետևում, որ չլսմեն:

Մի առաւօտ միջակ եղբայրը մտնում է օդետուն, հարցնում.

—Շօ, Ակօն եկա՛ւ:

—Եկաւ:

—Թապլեց:

—Թապլեց:

— Լից, ծօ լից, ադ տղին դարդն ինձի պիտի սրպանէ:

Կոնծում է և գնում:

Գալիս է մե՛ծ եղբայրը.

—Շօ, Ակօն եկա՛ւ:

—Եկաւ:

—Թապլեց:

—Թապլեց:

—Կարօն ա՛յ եկաւ:

—Կարօն ա՛յ եկաւ:

—Ան ա՛յ թապլեց:

—Ան ա՛յ թապլեց:

—Շօ մէ՛մ լից, ծօ մէ՛մ լից, ադ տղոց դարդն ինձի պիտի սրպանէ,

Ու նոչնպէս կոնծում:

Մի ժամանակ սկսել էին իրենք հացի արաղ պատրաստել ամենանախնական ձևով. ստացուած արաղը սաստիկ հոտ էր ունենում խաշի: Քաշում էին և խմում, արբում. վերջն այդ բանի վերջ դրուեցաւ:

Բացի խմելուց սաստիկ տարածուած է ծխելը: Ձէք գտնի մի տղամարդ 20-ից անց, որ չծխէ. ինչպէս օդու գործածուելը չափից դուրս է, այնպէս էլ ծխախոտի գործածուելը. հաստ պապիրոսը որ ձիգ են տալիս, կասես «թնդիր են վառում», ինչպէս իրենք են ասում: Այնպիսին կաչ, որ օրէնը ¹/₆ ֆունտ թութուն է ծխում: Իսկ 20 տարեկանից պակասները ծխում են ծածուկ:

Այստեղ գործածական է կալեանը (մանաւանդ առաջներն աւելի շատ էր գործադրում):

Վերջացնելով սննդառութեան մասին, այժմ դառնանք կերակուրներին, նրանց տեսակներին ու պատրաստելու եղանակին:

II.

Ուսելիիցները յարմար է բաժանել հետևեալ 15 դասի.

- | | |
|---------------------------|--------------------------|
| ա) Ապուրներ, | թ) Ձուեղէն կերակուրներ, |
| բ) Իւղեղէն կերակուրներ, | ժ) Աղը դրած, |
| գ) Բանջարեղէն, | ժա) Թուռլիներ, |
| դ) Մսեղէն, | ժբ) Քաղցրեղէն, |
| ե) Փլաւներ, | ժգ) Աղցաններ, |
| զ) Չիլաներ, | ժդ) Հատիկներ (խեճաղներ). |
| է) Քաղցրահամ կերակուրներ, | ժե) Համեմունք և արմտիք. |
| ը) Կաթնեղէն, | |

Ա.

Ա պ ու ռ ց ն ե ր .

Ապուրներն ամենակարևոր ուտելիքն են գիւղացու. ինչ էլ որ չլինի, գոնէ մէկ կճուռ ապուր էլ է պէտք է լինի թէ ամառ և թէ ձմեռ. Որովհետև ձմեռը կաթը չէ լինում, հետևապէս և թան, միևնույն ժամանակ իրարու չաջորդում են պասերը, այդ պատճառով գործադրում են մեծ մասամբ պասուց ապուրները:

Հանդուցեալ Կիւրեղ սրբազանը ապուր բառը բացատրում էր ապրել բառից. Մի կողմ թողնելով Ֆիլոյոգիկական կողմը, տեսնում ենք ճշմարիտ, որ գիւղացու ապուրստը ապուրն է. Ապուրները 13 տեսակ են. ամենից շատ գործադրուողը թանապուրը, մախոխ ապուրն ու անժուր ապուրն են:

- | | |
|----------------------------|-------------------|
| 1) Թանապուր, | 8) Ոսպով ապուր |
| 2) Մախոխ ապուր, | 9) Պանրով մալէզ, |
| 3) Անժուր > | 10) Կաթնապուր, |
| 4) Կորկոտ > | 11) Լոբիով ապուր, |
| 5) Էրիշտով > | 12) Հաւով շորբա, |
| 6) Փոխնդով > | 13) Բրնձէ շորբա: |
| 7) Գլխվէր կամ մալէզ ապուր, | |

Բ.

Ի լ ղ ե ղ ե ց կ ե ր ա կ ու ռ ց ն ե ր .

Իւղեղէն կերակուրները կրում են իսկական հացկական կնիք, և զուտ գիւղական են. Դրանք աւելի համեղ են, քան անհամ, պատճառն այն է, որ մշտական գործածութեան մէջ լինելով քէյվանիներն աւելի են մշակել, բարելաւացրել. Քաւախքի ժողովուրդը մսեղէնից զուրկ լինելով, նրա պակասը լրացնում է իւղեղէն կերակուրներով, հետը մեծ քանակութեամբ իւղ գործածելով. իւրը ոչ թէ ուտում են, այլ մինչև անգամ գզալով խմում, մանաւանդ ամառը. մինչև փլաւի տակ իւրը լճացած չկանգնի՝ գիւղացին գզալ չի վերցնի. Յաճախ պա-

տահում է, որ երբ կերակուր չէ, լինում, իւրը բրդճով ուտում են ինչպէս մածուն, Իւրաքանչիւր մարդու վրայ տարեկան գալիսէ 1', պուղ իւր, եթէ ոչ աւել.

- | | |
|----------------------|-----------------------|
| 1) Խաշիլ, | 13) Հացտապակ, |
| 2) Փոխինդ, | 14) Ճմուռ, |
| 3) Ջրխաշ, | 15) Սլիքօրակի (թ.), |
| 4) Ալպուր, | 16) Ղազլոխմասի (թ.), |
| 5) Թիրիթ, | 17) Ձիլա փլաւ, մսով, |
| 6) Խաշոյ, | 18) Բորանի, |
| 7) Թաթարէօրակի (թ.), | 19) Հէրխայ, |
| 8) Տըժվըժ, | 20) Քեաշկեակ, |
| 9) Խաւիճ, հմով, | 21) Քալաճօլ, |
| 10) > բովրած, | 22) Հասութայ, |
| 11) > լստով, | 23) Թաւաքիւթասի (թ.): |
| 12) Ածիկ, | |

Գ.

Բ ա ն ջ ա բ ե ղ Ե ն ն ե ր .

Գործադրութեան և առատութեան կողմից կերակրների մէջ երրորդ տեղը բռնում են բանջարեղէնները, որոնք գրեթէ շատ քիչ քաղաւով թեմաք բոլորն և ղ դաշտային բանջարներից են պատրաստուում: 16 տեսակ բանջարից միմիայն երեքն են բանջարանոցի, բազուկը, շախկամը և կաղամբը, իսկ մնացած 13 տեսակը դաշտային բանջարեղէններից, որոնցից միմիայն 2-ն են պահուում *) ձմեռուայ համար, միւսները գործադրում են եղած ժամանակ:

- | | |
|--------------------------|----------------------|
| 1) Աւելուկէ բանջար, | 9) Զախկմէ բանջար, |
| 2) Լապագէ > | 10) Լախանէ (քալամ) > |
| 3) Ճուճուէ > | 11) Նունինջէ > |
| 4) Չամիկէ > | 12) Նունուֆարէ > |
| 5) Սիլպեղէ > | 13) Գառնանկանջ > |
| 6) Կաքուկէ > | 14) Ճերոակ > |
| 7) Կճանէ (եղինջ) բանջար, | 15) Զրեշէ > |
| 8) Բազկէ > | 16) Թէլ բանջար > |

Բանջարեղէններն ընդհանրապէս բսնում են արտերի մէջ, նըրանց թմբերում, արօտատեղիներում ու աղբիւրների անկիւններում:

*) Հաւաքում են մեծ քանակութեամբ աւելուկ և լսպագայ, բերում սուն, մաքրում, հիւսում, ինչպէս կնոջ ծամը, կախում չտրդախներում, չորացնում, ապա գալարում պահում: Այդ միւսնոյն չարմարութիւնն ունի և շախկմի բոյսը:

Դ.

Մ ս ե ղ է Գ կ ե ր ա կ ու լ ր Գ ե ր .

Մտից, մտեղէն կերակուրից գրեթէ զուրկ է Ջաւախքի գիւղացիին. միւր նրանց համար ընդունուած չէ իբրև առօրեայ սնունդ, կերակուր, այլ իբրև մի աղիզ բան:

Միս ուտում է գիւղացին, երբ հարսանիւք է անում, կամ երբ մի պատուաւոր զիրք ունեցող հիւր է գալիս, կամ երբ գնում է որևէ տեղ ուլտտ, մատաղ է անում: Բացի այս բարիկենդանին միջոց ունեցողները մորթում են կով, եզ, ոչխար, կամ այծ: Երբեմն էլ պատահում է, որ միջոց ունեցողները աշնանը մորթում են չաղ տաւար կամ ոչխար, դաւուրմա անում, լցնում ծափը, ձմեռը մաս-մաս հանում, գործադրում:

Թռչուններ են մորթում հիւանդ եղած, կամ հիւր եկած ժամանակ:

Տեղումս բաւականին քանակութեամբ կայ աղաւնի: Այնպիսի գոմ կայ, ուր մօտ 200 գոյգ աղաւնի կայ: Բայց ժողովուրդը չէ հետևում նրա կանոնաւոր զարգացմանն ու աճեցողութեան: Թափառող կատուներն ահաղին քանակութեամբ փչացնում են այդ շուտ և հեշտ աճող թռչուններին և խրտնացնում, գոմերից փախցնում: Ձեղաւ մինչ օրս մէկը, որ հասկանար, թէ այդ տեսակ կատուին սպանելը մեղք չէ ամենևին, եօթը ժամ շինել հարկաւոր չէ նրա մեղքից ազատելու համար և երբէք նրանք Քրիստոսի թաշկինակը չեն. այդ կեղծաւոր, ապերախտ արարածները:

Աղաւնիները մեծ մասամբ գործադրում են մատաղացուի համար:

Կայ մի տգեղ սովորութիւն, որ մինչ օրս էլ դեռ շարունակւում է, դա հիւանդ կենդանու միան ուտելու սովորութիւնն է: Կէնց որ նկատում է գիւղացին իւր անասունի ամխուսափելի մահը, իսկոյն դանակը քաշում է բլին. Չատ անգամ հիւանդ կենդանու տէրը չայտարարում է գիւղին, որ նրա միւր ծախում է: Գիւղացիք հաւաքում են, որոշում գինը և անմիջապէս բոլոր միւր տանում:

Մտեղէն կերակուրների քանակը շատ քիչ է, այն էլ ոչ լաւ որակով: Մսի քիչ գործադրութիւնից նրա պատրաստելը ծաղկած չէ:

1) Ղաուրմա, (թ.)

2) Նայնի, (թ.)

3) Քիւթա, (թ.)

4) Կատլէտ (թաւաքեապպաի),

5) Քեապպա (թ.) խորոված,

6) Զխըրտմա (թ.)

7) Մսով ապուր,

8) Չուլլամայ (ղաուրմով և հաւկիթով),

9) Խաշ, ոչխարի և տաւարի,

10) Ղասաֆա (թ.)

Ե.

Փ յ ա լ ց ե ր .

Փլաւների տեսակները թէև քիչ են, բայց շատ գործածական։ Ամառ ժամանակ ամենից շատ գործադրուողը, իւղեղէն դասին հաւասար գործադրուողը փլաւներն են, բացի բրնձէ փլաւից.

- | | |
|-------------------|-------------------------------|
| 1) Էրիշուայ փլաւ, | 4) Խառը, բրնձէ և էրիշտէ փլաւ, |
| 2) Բլղրէ , | |
| 3) Բրնձէ , | 5) Խառը կորկտէ և էրիշտէ փլաւ. |

Զ.

Ձ ի յ ա ց ե ր .

Ինչպէս քիչ է շիլաների թիւը, այնպէս էլ սակաւ է նրանց գործածութիւնը։ Զիլաներն ընդհանրապէս գործադրուում են պասերին ձէթով (իւղի փոխարէն), միայն բրնձով-կաթով շիլան է, որ ուտիսուց է։

- | | |
|------------------------|-----------------|
| 1) Կաթով, բրնձէ շիլայ, | 4) Կարթոֆիլով " |
| 2) Չոր թթուով " | 5) Կորկտով " |
| 3) Լախանով " | |

Է.

Ք ա ղ ց ր ա հ ա մ կ ե ր ա կ ու ր ց ե ր .

Դրանք բոլորն էլ գրեթէ պասուց կերակուրներ են. պատրաստում են չորացրած մրգերից, որոնք կոչւում են ընդհանրապէս դախ։ Չորացրած պատրաստի մրգերն առնում են Խրթըզի թուրքերից։ Քաղցրահամ կերակուրներն ըստ մեծի մասին պատրաստում են նոր տարու տօներին, ուրախութեան օրերին, երբ վերջիններս պասի մէջ են ընկնում։

- | | |
|----------------------|-----------------------|
| 1) Խոշապ. (թ.) | 6) Թամաս (թ.) |
| 2) Արուկէ եայնի (թ.) | 7) Քարթոլ (կարտոֆիլ). |
| 3) Բրնձէ տոլմա (թ.) | 8) Լոբիա, |
| 4) Պաստեղ, | 9) Կանանչ լոբիա. |
| 5) Բլղրէ տոլմա (թ.) | 10) Բակմազ (թ.) ուռի. |

Ը.

Կ ա թ ց ե ղ ց ե կ ե ր ա կ ու ր ց ե ր .

Իւղեղէն կերակուրներին գրեթէ համահաւասար գործադրուում են կաթնեղէն կերակուրները, միմիայն այն տարբերութեամբ, որ իւղեղէն կերակուրները գործադրուում են ամեն ժամանակ, իսկ կաթնեղէնը՝ միմիայն գարնանը և ամառը, այսինքն կաթի առատ ժամանակը։

Կաթնեղէն կերակուրները մեծ մասամբ ընթրիքի համար են գործադրուում:

- | | |
|---------------------------------------|---------------------------------|
| 1) Զիւրբիա | 5) Պանիր ճիւղի, լոռ, թուշի |
| 2) Հումսեր (սերուցք) | պանիր, աղջրի պանիր, հուսակ, կա- |
| 3) Մածուն, | րասի պանիր, փսոր: |
| 4) Կարագ (կովի, մատակի, ոչ-
խարի), | 6) Դալ. |
| | 7) Քորամագ, |
| | 8) Պուլամայ, |

Դրանց մէջ ամենից շատ գործադրուողը պանիրներն են, մանա-
ւանդ ճիւղի պանիրը, այն է աղջրի և կարասի պանիրը, դրանց համա-
հասարար մածունը (ոչխարի), որ կաթ եղած ժամանակ շարունակ
տանտիկինը մակրթում է:

Քոլոր կերակուրների մէջ ամենից խասը և ընտիրն ընդունուած
է զիւրբիան. երբ մէկին հրաւիրում են հացի, եթէ նա փոքրակ
չունի՝ ասում է, «էնպէս կուշտ եմ, որ զիւրբիա էլ ըլլի՝ չեմ ուտէ»:

Թ.

Ձ ու ե ղ ե ն կ ե ր ա կ ու ր ն ե ր .

Սա շատ աղքատ է իւր տեսակով. գիւղացիք գիտեն երկու բան.

- 1) Միւլու, 2) Ձուագեղ,

Կամ թէ հակիթը խաշում, կամ խորուում ուտում են. (երբեմն
էլ կարագով են ուտում եփած հակիթը):

Ձուագեղն եփում են տղոցկանի տանելու համար, հիւանդուես
գնալիս, կամ մեռելոցին քահանային սեղանի համար. իսկ միւլուն՝
երբ հիւր է գալիս և իսկոյն հարկաւոր է կերակուր պատրաստել:

Փ.

Ա ղ ը դ ր ա ծ ու ս ե լ ի ֆ ն ե ր .

Ինչպէս ուտիս օրերին կերակուրից չետոյ գործադրուում է պա-
նիրը, այնպէս և պաս օրերին գործադրուում են աղը դրած բանջա-
րեղէնները, այն բանջարեղէնները, որոնք անյարմար են կերակուր
եփելու համար, բայց լաւ ուտելիք են լինում, երբ աղաջրում են դը-
նում, պահում որոշ ժամանակ:

- | | |
|-----------|------------|
| 1) Քեխ, | 5) Պամիթ, |
| 2) Ղմի, | 6) Բագուկ, |
| 3) Սիպեղ, | 7) Բէջաց, |
| 4) Ժախ, | |

Սրանցից միմիայն բազուկն է չարմար կերակրի համար:

ԺԱ.

Թ ու ու ռ շ ի ն ե ր .

Պասուց կերակուրների մի մասն էլ կազմում են թուռշիները։ Իւրաքանչիւր տուն 1—2 տեսակ դնում է ամառուանից։ Թուռշինե-րը մեծ մասամբ գործադրւում են Մեծ պասին։ Թուռշիները ոչ մի-այն գործադրւում են իբրև ուտելիք, այլ և գործադրւում են ուրիշ կերակուրների մէջ։

- | | |
|--|----------------------------|
| 1) Զախկմէ թուռշի (դիւլիւմ), | 5) Խիարէ թուռշի (վարունգ), |
| 2) » » (չորթթու), | 6) Պատլիճանէ թուռշի, |
| 3) Բազկէ թուռշի, | 7) Ղմէցէ թուռշի: |
| 4) Լախանա թուռշի (քալամ), | |

Դրանց մէջ ամենից ընտիրն է վարունգէ թթուն, որը սակայն շատ խիստ հազուագիւտ է, ապա շախկմէ թթուն։ Ջաւախէթի կենտ-րոնին մօտ գտնւում է Վաչիան գիւղը, որ, յայտնի է իւր շախկամով։

ԺԲ.

Ք ա դ ց ր ե դ ե ն .

Սեղանի համար իբրև քաղցրեղէն շատ քիչ բան ունի գիւղա-ցին. նա զուրկ է կարկանդակների տեսակներից. նրա ազիզ քաղցրե-ղէնը հալուան է, դրա հետ և մի-երկու բան, այն էլ հրաւէրներին ու հարսանիքներին։ Դրանց թւում դասեցինք և գաթան, թէև ա-նուշ չունի մէջը։

- | | |
|-------------|---|
| 1) Գաթայ, | 4) Բիշի (իւղով և ձիթով, երե-սին մեղր ածած). |
| 2) Հալուայ, | 5) Փշրած փոխինդ: |
| 3) Սեր, | |

Այս վերջինը սովորական է, երբ ուզում են՝ փշրում են, բայց ս. Սարգսի տօնին՝ (Առաջաւորաց պահք) անպատճառ. Քաղցրեղէն-ների հետ կարելի է միացնել և մեղրը, որ թէ կերակրի հետ է գոր-ծադրւում և թէ առանձին։

ԺԳ.

Ա դ ց ա ն ն ե ր .

Բանջարեղէններից բացի կերակուր պատրաստելուց և աղը դնե-լուց՝ պատրաստում են և աղցաններ, որոնք պասուայ համար են։ Աղ-ցան խօսքը դուրս է եկել աղ-ցանել բառից, այդ նրա համար, որ երբ բոյսը լաւ խաշում են, յետոյ քամում ու ձեռքերով ճմլում, ջար-դում՝ մեռցնում (ինչպէս իրենք են ասում), յետոյ վրան առատ աղ են ցանում, քիչ էլ ձէթ, և ուտում։

- | | |
|----------------------|-----------------|
| 1) Աւիլուկէ աղցան, | 3) Սիպեղէ » |
| 2) Բազկէ » | 4) Քեխէ » |

ԺԴ.

Խ Ե Ծ Ա Ղ Ե Կ Ե Բ Ե Լ Ի Ն Ա Տ Ի Կ Ե Բ Ե Բ .

Ջաւախքի գիւղացիները բացի կերակուրներից և քաղցրաւէնիներից պատրաստում են հացահատիկներից և այլ ուտելիք, որ կոչւում է խիճաղն և հատիկ, որոնք այդ երկրում փոխարինում են չոր մրգի։ Խիճաղները բովրում են, իսկ հատիկները՝ խաշում։

- | | | | |
|-------------------|---------|-------------------|---------|
| 1) Խեճաղ կորկտէ | բովրած. | 5) Խեճաղ լազութէ, | բովրած. |
| 2) " ցորնէ | " | 6) Հատիկ ցորնէ | խաշած. |
| 3) " կանէփէ, | " | 7) " քուշնացից, | " |
| 4) " գարի կորկտէ, | " | 8) " ոսպից | " |

Հատիկներն ու խեճաղները ըստ մեծի մասին գործադրւում են մեծի պահոց օրերին. իսկ միջուկին, Քառասուն մանկանց տօնին՝ անպատճառ։ Քառասուն մանկունքը (որ գիւղում գիտեն Մեծ պասի միջուկ անունով) կատարելու համար՝ ջահէլները խմբերով հաւաքւում են օդաները (երիտասարդներն առանձին, օրիորդներն առանձին) և ճնրադրութիւն անում, շատերը մինչև անգամ 40 x 40. ապա մէջ բերում հետերը բերած անեկը, բիշին, հատիկը, խեճաղը և այլն ուտում, երգում, պարում, հէքիաթներ, հանելուկներ, ասածուացքներ ասում մինչի լոյս, ապա ցրւում տները։ Այդ գիշերը մի առանձին շքով են կատարում իբրև մի սրբագործուած ծէս։

Չատ հետաքրքիր են այդ գիշերները *) թէ գիւղական գեղարուեստի, թէ ազգագրական նիւթերի և թէ ժողովրդական բանահիւսութեան ոգու տեսակէտից։

ԺԵ.

Հ Ա Մ Ե Մ Ո Լ Ե Բ Ե Լ Ա Ր Մ Տ Ի Բ

Ըստ գործադրութեան այս վերջին 15-երորդ դասը երկու տեսակի է բաժանւում. ա) համեմներ, որ գործ են դրւում կերակրի մէջ թէ թաց ժամանակը և թէ չորացրած. բ) այն բոյսերու համեմները, որոնք ուտւում են իբրև միրգ։

Ա.

- 1) Համեմ (չորացնում են),
- 2) Կոտեմ, (*Lepidium sativum* L.)
- 3) Սոխ, գլուխ, կանաչ. գլուխ սոխը չորացնում են,

*) Այդ գիշերներին նման են և մաճի գնացած օրերը։ Մաճի սա է, որ երբ մէկն ուզում է իւր տան մրոտած առաստաղը լուանալ («տուն լուալ»), կամ կաւը կոխել, կամ էրեշտան կտրել կամ բուրդը գզել, կամ խսիլացու ճիւղը յլորել, կամ մանած մանել և այլն, հրաւիրում է գիւղական հարս ու աղջիկն և պահանջուած գործը կատարել տալիս, որի փոխարէն լաւ հիւրասիրութիւն է ցոյց տալիս։

- 4) Սամիթ (*Anethum graveolens* L.) և (աղն են դնում)։
- 5) Մաղադանոս (չորացնում են),
- 6) Բոխի (*Raphanus sativus* L.) (փորում են գետինը, մէջը պահում),
- 7) Տարդուն (*Artemisia Dracunculus* L. չորացնում են),
- 8) Ռէհան (չորացնում են),
- 9) Ծեթրոն (չորացնում են),
- 10) Դաղձ, (*Mentha sylvestris* L. չորացնում են),
- 9) Չախկամ (*Brassica Rapa.*)
- 10) Ոսպ (*Ervum Lens* L. չորացնում են),
- 11) Բակլա (*Vicia Faba* L. չորացնում են),
- 12) Վիկ (չորացնում են)։

Բ.

- 13) Փուրջուկուղ, գազար, (թաղում են)։
- 14) Ատուլ **) արմատ (թաղում են)։
- 15) Կանաչ դմի, * (բոյսի ցողունը),
- 16) Ելտրգքեօքի (գետնախնձոր),
- 17) Մատուկ * (արմատ)։
- 18) Տատրակ, կամ կատուկի թաթիլկ * (բոյսի ցողունը),
- 19) Սունկ (չորացնում են կամ թաց-թաց գործադրում),
- 20) Կոճղէզ (արմատ),
- 21) Երնջակ, * (*Eryugium campestre* Հ.) (բոյսի ցողունը)։
- 22) Գոզոզ, * թէ ցողունը և թէ փշապատ գլխի միջուկը (ուտում են)։
- 23) Մանդակ * (արմատ),
- 24) Փշեր, * ցողունը. (գառ, տիկնա, կճուկ-կճման, չախալ և այլն)։
- 25) Բաթաթուկ, * բոյսը, (աճում է մեծ մասամբ հողածածկ կտուրների վրայ)։
- 26) Սինձ * (*Tragopogon frateusis*) որ մեխակի բոյսի ձևն ունի, ուտում են աղով։

Վերջացնելով ուտելիքների մասին, այժմ դառնանք նրանց պատրաստելու եղանակին։

* 10 աստղանիշ արմատիքների բոյսերը հէնց քաղելու պէս ուտում են
**) Ատուլը դմու արմատն է։

Կ Ե Ր Ա Կ Ո Ւ Ր Ն Ե Ր Ի Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ Ը .

1) Թանապուր. Առաջ ածում են կորկոտը ջրի մէջ, դնում են կճճով թնդրի վրայ եփելու, երբ կորկոտը խաշւում է, թանով և գարի ալրով խոլս են պատրաստում, հետը խառնում, նորից եփում, ապա երեսին սոխառած անում:

2) Կորկոս ապուր. Առաջուց միասին եփում են կորկոտը, միսը և ջուրը, ետոյ խոլս են անում, խառնում հետը, ապա երեսին սոխառած անում, ինչպէս թանապրին:

3) Մալեզ ապուր. Առաջ իւղի մէջ ցորեն ալիւրը լաւ բովրում են թաւալի մէջ, ետոյ վերան ածում են եռ եկած ջուր, դառնում է մալէզ: Սա գործ են ածում տղոցկաններին ուտեցնելու համար:

4) Պանրե մալեզ. Առաջ եռացնում են ջուրը, ապա ցորեն ալիւրից շինած խոլսը ածում մէջը, քրքրում են կճճի (ճիւղի) պանիրը խառնում հետը, ապա սոխով սոխառած: Սա շատ քիչ է գործածւում:

5) Էրիւսով ապուր, կամ պոչով ապուր. Առաջ եռացնում են ջուրը, ածում էրեշտան, հետը խառնում են ոսպ, չորթանը հարում են, դարձնում իբրև թան ածում վրան, ապա ծեծած թնդղուց միսը մանր-մանր քիւֆթա են անում, խառնում հետը, ամենից վերջը սոխառած: Սա մեծ մասամբ եփում են հոգուհացին,

6) Կաթնապուր. Առաջ եփում են կաթը, ապա ածում բրինձը, երբ փոքր ինչ թանձրանում է եփ դալուց՝ հետը խառնում մեղր, կամ շաքար: Սա գործ է ածւում համբարձման տօնին *) և առանց այդ կերակուրի Ջաւախքի գիւղացին այդ տօնը չէ կատարում:

7) Մախոխ ապուր. Գարի կորկոտը (ակ) ջրի մէջ լաւ եփում են, մի օր առաջ թթուեցրած խմորը սաղ գցում են ջրի մէջ, զարնում խոլս դարձնում, ածում են եռ եկած ջրի և կորկոտի վրայ, նորից եփում, ետոյ երեսին ցանում են չորացրած, մանրած դաղձ (անանուխ), ապա ուտելիս հետը սխտոր խառնում: Սա մեծ պասի միակ ուտելիքն է ջաւախէթցու:

8) Անժուր **) ապուր. Ցորենից քաշած կորկոտը ածում են ջրի մէջ, եփում, ցորեն ալիւրից խոլս անում, խառնում հետը, ետոյ ձիթով սոխառած անում, ածում վերան: Սա եփում են աւելի գարնանը, ամառը, կարճ պասերին:

*) Այդ տօնը շատ գեղարուեստօրէն է կատարւում հայ ժողովրդի մէջ, նախշուն եզր, փառը, հօրոտ-մօրոտը, մանաւանդ, ջանգիւլլում, խաղը, վողը, պարը և այլն. մենք առանձին կ'դառնանք այդ տօնի նկարագրութեան:

**) Ժուր չունի է նշանակում. (ան-ժուր): Ժուր նշանակում է նիւթ անունդ:

9) Փոխնդով ապուր. Ջուրը եռացնում են, հետը խառնում աղ և քիչ տակտեղ, չետոյ փոխինդը ջրի մէջ լաւ զարնում են (խուսի պէս) ածում վերան: Սա եփելու պէս պէտք է ուտել. քիչ մնալով թանձրացնում է և անպէտքանում:

10) Ոսպով ապուր. Ջուրը և ոսպը միասին եփում են, ցորեն ալիւրից խուս շինում, խառնում հետը. ձիթով սոխառած անում, ածում վերան: Սա ձմեռուայ պասերին են գործ ածում և հոգուհացին (երբ պաս օր է գալիս):

11) Լոբիով ապուր. Ջուրը, ցորեն կորկոտը և լոբիան եփում են միասին. ցորեն ալիւրից խուս անում խառնում հետը: Սա սուրբ Սարգրսի պասին ընդհանրապէս ընդունուած է գործածել:

12) Հաւով շորքա. Եռացնում են առաջ ջուրը, ապա զցում մէջը հաւը, քիչ վերջը խառնում են բրինձ, ապա քիչ կանաչ սոխ: Սա ուտեցնում են հիւանդներին:

13) Բրնձե շորքա. Եռացնում են ջուրը, քիչ խուս խառնում ցորեն ալիւրից, երեսին կանաչ սոխ ջարդում: Սա պասուայ կերակուր է հիւանդներին:

14) Էրիճճա փլաւ. 3 տեսակ. ա) կորկոտով. բ) բրնձով. գ) սալթ *).

ա) Առաջ բլղուրը (քաշած կորկոտ) եփում են ջրի մէջ, ետոյ հետը խառնում էրիշտան և սպասում մինչև վերջինիս խաշուիլը. ապա քամում սալաչով կամ քամիչով, դաղած իւղը վերան ածում:

բ) Առաջ եփում են ջրի մէջ բրինձը, ետոյ ածում էրիշտան, խաշում, ապա քամում և դաղած իւղը վերան ածում:

գ) Խաշում են էրիշտան ջրի մէջ, ետոյ քամում, դաղած իւղ վերան ածում:

15) Բլղրե փլաւ. Միսը եփում են ջրի մէջ, սոխը դաղում իւղի մէջ՝ ածում եփած մսի վրան, ետոյ ածում են բլղուր, թողնում են կրակի վրայ մինչև լաւ եփուիլը. ապա սոխով սոխառած անում, ածում վերան: Սա մեծ մասամբ պատրաստում են գուլթնոցին, երբեմն էլ ձմեռը:


16) Բրնձե փլ աւ. Եփում են սովորական եղանակով: Սա պատրաստում են հարսանիքներին, հոգու հացին, ազիզ օրերին և հիւր եկած ժամանակ:

17) Խաւիլ. Եռացնում են ջուրը, մանր բլղուրը ածում մէջը. բլղրից ստացուած ալիւրը **) խուս անում, խառնում հետը, ետոյ թրնթոցով սկսում են լաւ զարնել (ինչպէս հէրիսան, բայց սա համեմա-

*) Սալթ՝ սոսկ, միմեայն:

**) Երբ կորկոտը երկանքէնրով քաշում են, մանրացնում բլղուր ըստանում, այդ մամրունքի ժամանակ գոչանում է և խոշոր ալիւր:



ՆԳ. 1.



Ա. կարաս, Բ. ծափ, Գ. իւղի շինի, Դ. կճուճ, Ե. ապրի կճուճ, Զ. փարջ, Է. բով, Ը. խուփ—
 1) փոր, 2) բերան, 3) ունկ, 4) սակ.



Ա. պղինձ, Բ. Փարխած, Գ. թանձարա, Դ. գիւգիւմ, Ե. թաւա Զ. եամտղ, Է. ջաւզա, Ը. իրրղղ,
 Թ. լական, Ժ. լականի ղափաղ—1) փոր, 2) բերան, 3) ունկ կամ պոյ:



1. քրեղան, 2. թաս, 3. կուշ, 4. մորշուպա, 5. մորշուպա, 6. ջրի թաս, 7. լանկառի, 8. լանկառի, 9. քաւկիր, 10 սաֆ. 11 գուժնի թաս, 12. չայնիկ, 13. սառուոր, 14 մաթրապ կամ սունկ, 15 սինի.

ՆԿ. IV.



1



2




3




4



5




6



7




8




9

1. գլխոց, 2. գդալ, 3. շերեփ, 4. աղթաս, 5 սալա, 6. քուղա, 7. տակառ, 8. տաշտ, 9. քարէ գուռ.




1 և 2. հաւանք (1. գեպան, 2. սալ), 3. սխտորաման, 4. սխտորածեծիչ, 5. դուռ, 6. ակտի,
 7. թնթոց, 8. երկանք, 9. էրիշտի դանակ, 10. ճրագ, 11. նաւթէ ճրագ, 12. Փարաշ, 13. աւել,
 14. ճրագգիր:



1. Թնդիր, 2—3. խուփ, 4. խաչերկաթ, 5. գեալպարի, 6. սնկուացկալիք, 7. ակիշ, 8. շիշ, 9. Թաթակիչ, 10. շամփուր, 11. օջաղ, 12. մաշա, 13—14. կասկարէք, 15 սանձ.


Հ.Թ.

ՆԿ. VII.



ՎՃ.

1. խոնչալ, 2. խոնչխոտք, 3. խոնչի գեառակիւ, 4. բաթաթ, 5. գրտնակ, 6. ձախքաշ, 7. օխլաւի, 8. սիլկի, 9. թթխմոր աման, 10. հացի սաշտ, 11 հէսջրի աման.



1. իսկեամիլի, 2. ամբար, 3. դափաղ, 4. սնդուկ, 5. աթոռ, 6. տղի թնդիր, 7. ճանիկ, 8 օրօցք,
9. լուսացքի աթոռք:

տաքար քիչ են զարնում), աճում են իւրը վրան, ուտում, վերջն էլ (իւրով ուտելուց ետոյ) կաթով են ուտում: Սա շատ սովորական կերակուր է գուլթնոցին և դաշտապին աշխատանքի ժամանակ:

18) Քեաեկեակ. Կորկոտը եփում են ջրով ինչպէս հէրիտայ, (միայն չեն զարնում) իւրը աճում են վրան, ուտում:

19) Փոխիեդ *). Խիստ եռ եկած ջրով լաշում են փոխիեդը դարձնում պինդ զանգուած, իւրը աճում երեսին, ուտում: Իւրով ուտելուց ետոյ՝ ուտում են կաթով, երբեմն էլ մեղրով:

20) Հեխայ. Յորեն կորկոտն եփում են ջրի մէջ, մէջը հաւ գրցում, դնում թնգիր, և սա եփում է դարձեալ մինչև երեկոյ, հաւը մէջը իսպառ հալուում (բացի ոսկորներէից). ապա առնում են թնթոցն, այնքան զարնում, որ միանգամայն դառնում է մաճուցիկ զանգուած, ապա իւրն աճում երեսին, ուտում **):

21) Ջրխաւ. Եփում են ջուրը, աղն ու իւրը գցում են հարկաւոր չափով ջրին, ետոյ աճում են ալիւրը, և լաւ խառնում մինչև եփուելը. ապա իւրն աճում երեսին, ուտում:

22) Խաւիժ հմով. Հումը (Հումսեր կամ սերուցք թթուեցրած) լաւ եփում են, այնպէս որ եփած հմի երեսը իւրի գոչն է ստանում, ետոյ մէջը ալիւր ածելով խուս են անում և թողնում կրակի վերայ եփուելու, ու հետը եփում են՝ հետը խառնում, խառնում են այնքան, մինչև որ իւրը բաժանուում է զանգուածից, ապա ուտում: Սա եփում են երբ խաբը (կաթփոխ) վերաներն է լինում, այսինքն երբ հում կաշ-
 23) Բովրած խաւիժ. Իւրը դնում են թորոնին դաղում, մէջը քիչ ալիւր աճում, որ իւրի մէջ եփը լաւ առնի. հէնց որ բովրահուող դուրս է գալիս՝ եռ եկածջուրը աճում են վրան. եփում է նոր աճած ջրի հետ՝ իւրը երեսն հանում: Եթէ աղ ածեն՝ կոչուում է սոսկ խաւիժ:

24) Հասուբայ. Հասութան էլ միևնոյն կերպ է պատրաստուում, ինչ կերպ խաւիժը, միայն երբ աղի փոխարէն խառնեն մեղր՝ դառնում է հասութայ ***):

25) Խոտվ խաւիժ. Խուսն աճում են իւրի մէջ, եփում են և հետը խառնում, ապա աղջուր են աճում վրէն, կլինի խոտվ խաւիժ:

26) Թաքարբեգօրակի. Խմորը (անեկ) կոխում են (ոտների տակ լաւ տրորում), բաց անում լաւաշի պէս, կտրատում քառակուսի կէս

*) Փոխիեդն ստանում են ցորենից այսպէս. ցորենը բովում են բովի մէջ, դարձնում խեճաղ. այդ խեճաղն ուղարկում են ջրաղաց, աղում ինչպէս ալիւր: Այդ ստացուած (բովուած) ալիւրը՝ կոչուում է փոխիեդ կամ դրական լեզուով փոխիեճ:

***) Զատիկ և Ծննդեան ճրագալոյց երեկոներին երբ պատրաստում են՝ եփում են առանց հաւի, նաւակաթիկի պատճառով:

***) Հասութան և խաւիժը պատրաստում են տղոցկաններին համար:

վերջոյի մեծութեամբ, աղ ածած, եռացրած ջրի մէջ ածուս կտրած խմորը լաւ խաշուում, քամում քամիչքով կամ սայալով, դաղած իւղը վերան ածում, ապա սխտորով մածուկը երեսին ածում, ուտում:

27) Ալբեօրակի. Անեկ խմորը լաւ կոխում են, ինչպէս թաթար-բէօրակու խմորը, նշխարքի պէս բարակ բացքը շինում, յուռութի ձևով (եռանկիւնի) կտրում, գցում եւ եկած իւղի մէջ եփում, մեղր ցանում վրան, ուտում: Սա պատրաստում են ըստ մեծի մասին բարիկենդանին:

28) Ղազլոխմասի. Հակիթը, կաթը, սերուցքը ալիւրը բոլորն իրարու հետ խառնում են, պատրաստում խսի նման մի բան, ետոյ գդալ-գդալ գցում դաղած իւղի մէջ, եփում և հանում կտոր-կտոր, մինչև բոլոր խուսի վերջանալը: Սա պատրաստում են բարիկենդանին:

29) Թաւաքեպեպե. Դաղած իւղն ածում են ալիւրի վրան, խառնում և փոխնգի պէս փշրում, որ դառնում է խորիզի *) նման մի բան, այդ խորիզն ածում են բացած խմորի մէջ, չորս ծալքը փակում փոքր ծրարի պէս, ապա տապակում իւղի մէջ, վերան երբեմն մեղր ածում, ուտում: Սա պատրաստում են բարիկենդանին:

30) Հացատպակ. Հակիթը ջարդում են, ածում ամանի մէջ, դարնում. հացը կտրատում, գցում հակիթի մէջ ապա հանում գցում եւ եկող իւղի մէջ տապակում: Սա եփում են բարիկենդանին և ամառը՝ չաչիրոցին (խտոհարի ժամանակ), ու քաղոցին (հունձի ժամանակ):

31) Ամուռ. Հացը մանր կտրատում են բրդոնի պէս, գցում եւ եկած իւղի մէջ և ձեռով ձմլում, տրորում, ուտում: Սա պատրաստում են հօտաղների համար, որոնք դաշտում լծկանն են արածացնում, և պատրաստում են տարուայ չորս աշխատանքի ժամանակ, այնէ՝ ցանոցին, հերկոցին—չաչիրոցին, քաղոցին և կալոցին: Ձեռաց պատրաստուելու համար չարմար է: Ամուռը՝ դուրս է եկել ձմուռը բառից:

32) Ալպուր. Առաջ սոխը դաղում են իւղի մէջ, չետոյ հակիթը կտրում, ածում վերան, ապա ջուր են լցնում և եփում, երբ ուզում են ուտել՝ ամանի տակը (ուր պէտք է ածեն) հաց են բրդում և ուտում: Դա մեծ մասամբ խոտհարի և հնձի ժամանակ են պատրաստում:

33) Քեպալանօ. Վեր են առնում չորթանը, վերան ածում տաք ջուր, ձեռով հարում (տրորում ամանի մէջ). չետոյ ջրի դառած չորթանը ** դնում են թնդրին, սոխառած անում, դաուրման մանր ջար-

* խորիզ ասում են իւղի մէջ բոված ալիւրին, որ գործ են ածում գաթի միջի համար:

** Չորթանն ստանում են թանից—(չոր-թան) այսպէս. թանը դնում են կարասով թնդի բփելու. եփելուց թանից առաջանում է պանրի տեսակ մանր մասնիկներ, որ նստում են կարասի տակը. հանում են այդ եփած թանն, ածում մեծ տոպրակի մէջ, կախում մի սեղից քամուելու. երբ սի-

դու՛մ իւղի մէջ ածու՛մ, սոխի հետ դաղու՛մ, ապա ամանի տակը բրդու՛մ, եփած չորթանն ածու՛մ ւսնտեղ, սխտորը ցանու՛մ երեսին, ապա հետը խառնու՛մ դաղած սոխն ու դառւրման, ուտու՛մ: Սա եփու՛մ են ձմեռը, բարիկենդանին:

34) Ածիկ. Ածիկն ստանու՛մ են ցորենի ծիլիւրից: Ձմեռը ցորենը թրջու՛մ են, ածու՛մ սալաների մէջ և դնու՛մ տաք տեղ (ըստ մեծի մասին գոմը) ծլելու, երկօրը մի անգամ ջուր են ածու՛մ մինչև ծիլերը բարձրանալը, յետոյ այդ ծիլերը կտրու՛մ են, ածու՛մ սանդի մէջ և այնքան ձեծու՛մ, մինչև որ ջրային զանգուած է ստացու՛մ. ապա այդ ջրային զանգուածով խուս են պատրաստու՛մ ալիւրից, ածու՛մ են ծափը, բերանը պինդ փակու՛մ, ծակոտիները խմորով ձեփու՛մ, դնու՛մ թնդիւր եփուելու. թորոնու՛մ ծափի խփի վրան մի ծանր քար են դրնու՛մ, որ պահի. եփու՛մ է դառնու՛մ խաւիճի նման բան. գոլորշու շատութիւնից (երբ բոլորովին եփած է լինու՛մ) քարն այլ ևս չէ կարողանու՛մ պահել. յանկարծ մի թնդիւն է լսու՛մ, քարը գլորու՛մ է ցած, խուփը թռչու՛մ վերև, իմանու՛մ են, որ ածիկն եփուել է, հանու՛մ են, ուտու՛մ: Սա պասուց կերակուր է, գործ են ածու՛մ մեծ պասին:

35) Թիւրթ. Իւղով առաջ տապակու՛մ են չիրը, սոխը և կարտոֆիլը, ապա ջուրն ածու՛մ վերան, յետոյ հետը բրինձ խառնու՛մ. ուտելիս ամանի տակը բրդու՛մ, թիրիթը բրդոնի վրան ածու՛մ: Սա քիչ գործածական է:

36) Խաժօ. Քալամը, կարթոֆիլը ջարդու՛մ են, ածու՛մ ջրի մէջ, ապա սոխը ձէթով դաղու՛մ ածու՛մ գլխին, հացը բրդու՛մ մէջը՝ ուտու՛մ: Ձմեռն են գործածու՛մ պասերին:

37) Տըժվըժ. Ոչխարի թոքերը, լեարդը, սիրտը և երիկամուկները մանր կտրատու՛մ են, մանրացնու՛մ, խառնու՛մ կորկոտի հետ, դնու՛մ թնդրի վրան եփուելու, յետոյ իւղով սոխառած անու՛մ, ածու՛մ երեսին, ուտու՛մ: Պատրաստու՛մ են ձմեռը:

38) Զիլափլաւ. Առաջուց եփու՛մ են միսը, յետոյ ածու՛մ բրինձը, հետն էլ սոխ ջարդու՛մ, ապա վերան քիչ իւղ ածու՛մ, ուտու՛մ: Պատրաստու՛մ են ձմեռը:

39) Բոքանի. Բանջարը լաւ խաշու՛մ են, քամու՛մ (ձեռների մէջ հուպ տալով), ածու՛մ իւղի մէջ տապակու՛մ, ապա վերան նորից դաղած իւղ ածու՛մ, յետոյ ուտելու ժամանակ սխտորով մածուկն երեսին ածու՛մ, ուտու՛մ: Պատրաստու՛մ են գարունը և ամառը, այսինքն երբ կանաչ բանջարեղէններ կան:

ճուկը հեռանու՛մ և մնու՛մ է պանրային թթուատ մասը (փսորը), վերցնու՛մ են այդ, ձեռով կոլորացնու՛մ, դնու՛մ չարդախը չորանալու: Չորանու՛մ է, մինչև քարացած գրութեան հասնու՛մ: Ածու՛մ են տոպրակը պահու՛մ, ձմեռը գործ ածու՛մ:

40) Բանջարեք, չորը, Գարնանը հաւաքում են, հիւսում կանանց ծամի նման, գալ շինում հետևեալ բանջարները.—1) աւելուկ, 2) լապազա, 3) շախկամի կպեճ, 4) ճրռճրռ, իսկ բազուկը սա աղն են դնում, Խաշում են, ձեռների մէջ քամում, ածում կճուճը, ջրի մէջ եփում, խառնում են հետը բլղուր, ձէթով սոխառածն ածում երեսը, ուտում:

41) Լոբիաջուր. Լոբիան լաւ եփում են ջրի մէջ ինչպէս ապուր, հացը բրդում մէջը, վերան սխտոր և քացախ ածում, ուտում, Սագործ է ածում սակաւ, այն էլ մեծպասին, Իսկ կանաչ բանջարները եփում են ամառը և գարնանը կաթով:

42) Կարով-բրնձ Երլայ. Կաթն ու բրինձը միասին են եփում, իւրը ածում երեսին:

43) Չոր-քթուով Երլայ. Բլղուրն ու չոր թթուն իրար հետ եփում են, վերան ձէթով սոխառած անում ուտում:

Այդ տեսակ են պատրաստում և քալամով, կարթոֆիլով, բազկով ու շախկամով շիւաները:

44) Կորկոտ Երլայ. Կորկոտն եփում են ջրով, ձիթով, սոխառածն ածում երեսին:

45) Դառուճա (ոչխարի, կովի, եզայ). Միսը (չաղ) պղնձի մէջ ջրով քիչ եփում են, յետոյ կենդանուց ստացուած հալած ճարպը ածում վերան, հետը եփում, հետը խառնում, մինչև ջրի չքանայը, ապա երբ դառուման նստում է, ածում են ամանի մէջ, սառեցնում, բերանը պինդ փակում, պահում ձմեռուայ համար:

46) Եայնի. Միսը եփում են ջրով, երբեմն հետը խառնում են սոխ ու կարտոֆիլ:

47) Քիւճքա. Միսը ծեծում են մեծ դանակով, ծեծած մսի մէջ խառնում բլղուր, սոխ, տակտեղ, ձեռքերի մէջ փոքրիկ գնդակներ շինում այդ խառնուածքից, զցում ջրի մէջ եփելու. իսկ ջրի հետ խառնում են բրինձ, տարդուն և հաւկիթ:

48) Կասիե. Ծեծում են միսը, տափակացնում, զցում իւրի մէջ տապակուելու. Սա նոր է մտել:

49) Խոռոված (Ֆեապապ). Մսի կտորները շարում շշի վրան, կախում թնդիը, խորովում:

50) Չխրտմա. Միսը եփում են ջրի մէջ, հետը խառնում իւր, հաւկիթ և կարտոֆիլ *):

51) Մսով ապուր. Միսը առաջուց եփում են ջրի մէջ, յետոյ ածում կորկոտ, նորից եպում, ապա երեսին անում սոխառած:

*) Չխրտմա պատրաստում են հաւի և ոչխարի մսից միմիայն:

52) Չուլլամա. Ղաուրման լաւ տաքացնում են, հաւկիթը ջարդում հետը եփում:

53) Խաւ. Խաշը պատրաստում են կենդանիների ոտներից (փաշա են ասում) և մեծ ստամոքսից. դրանք լաւ մաքրում են եռացրած ջրով, յետոյ կտրատում, գցում ջուրը, լաւ եփում, ապա սխտորն ածում վերան, ուտում:

54) Ղասաճա. Արիւկի (չիր) հետ խառնում են ղաղած սոխը, եփում:

55) Մխլու. Ձուն ջարդում են, ածում դաղած իւլի մէջ, եփում. եփելիս խառնում են:

56) Ձուածեղ (ձուազեղ). Ձուն ջարդում, ածում են դաղած իւլի մէջ և թողնում մինչև տակի երեսի եփուիլը. ապա դարձնում են վերևի երեսը եփում. ձուազեղի մէջ աղ չեն անում:

57) Արիւկի եպլմի. Արիւկն ու սոխը իրար հետ եփում են, հետը խառնում թամաս ու խնձորէ դախ, կամ թէ չէ խաս տանձի դախ:

58) Ղոսաւլ. Չորացրած թուխը խաշում են ջրի մէջ, ստացում է ջրալի կերակուր:

59) Քրնձե տումա. Արիւկը, բրինձը և քիշմիշը թրջում են, քամում, յետոյ կաղամբի տերևի մէջ փաթաթում, կճճի մէջ խնամքով շարում, վերան քիչ ջուր ածում, դնում թնդիր եփուելու:

60) Բլդրե տումա. Ինչպէս բրնձէ տուման:

61) Պասսեղ. Պաստեղ (հունից կամ ճանճուկից) թրջում են ջրի մէջ, ձեռքերով ճմլում, հալեցնում, ջրախառն անում, հացը բրդում, ուտում:

62) Թամասա. Թամասը (չոր) խաշում են ջրով, ինչպէս և արիւկէ ձեռքին առանց սոխի:

Կարտոֆիլն ու լոբիան երբ պատրաստում են իբրև առանձին կերակուր, կամ տապակում են, կամ խաշում, աչնպէս ուտում:

Մենք կերակուրների պատրաստելու ժամանակ աղի անուն չըտուկնք, ինչ ասել կուզէ, որ բոլոր կերակուրներին անում են նախ քան եփուիլը աղ իւր չափով. որոնք առանց աղի են, ասացինք. Իսկ մրգերից ստացուած կերակուրների մէջ աղ չեն անում:

Բ.

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ի Ի Ն Ի Ս Տ Ո Ւ Կ Ա Յ Ը .

Ինչպէս օդը, ջուրը, սնունդը մեծ դեր են խաղում մարդուս առողջապահական գործում, աչնպէս էլ բնակարաններն իրենց կահաւորութեամբ:

Սակայն կարասիքի կողմից այնքան աղքատ է Ջաւախէթը, որ կարելի է ասել չունի:

Սկզբից սովորութիւն լինելով տները շինել գետնի մէջ, այսօր էլ ջաւախէթցիին հաստատ մնացած հսին՝ կատարում է նոյնը. նրա տան յատակը գետնի մակերևույթից $\frac{1}{2}$ —1 արշին պէտք է ցածր լինի. և կասէք այդ պարտաւորեցուցիչ լինի. Չոր, անտաշ քարից պատերը, հողէ խոնակ և սառն յատակը, մութը, ճնշող մթնոլորտը մարդու վրայ այնպիսի ազդեցութիւն են թողնում, որ նրա մէջ ապրելը անհնարին է թւում, և եթէ իրեն բուն ժողովրդին էլ ուշի-ուշով նայէք, կտեսնէք, որ նա ևս դժուարութեամբ է տանում, թէև սովորած է. ոսկրացաւ, ստամոքսի խանգարումն, աչքացաւ և այլն անպակաս են ժողովրդի միջից: Զատ ընտանիքներ մինչև անգամ միևնոյն տեղում են նստում վերկենում, ուր կապում են նրանց անասունները. էլ ինչ խօսք որ անասունների մուտքը և նրանց մուտքը միևնոյն դռնով է:

Ամառն ինքըստինքեան երբ կենդանիները ներսը չեն ապրում, բնակարանների օդը մաքուր է. բայց երբ հասնում է ձմեռը, գիւղացու գետնախշտի կեանքն անտանելի է. նա փակում է դուռ ու երթիկը, մտնում է կենդանիների հետ միևնոյն շինութեան մէջ և ծծում է այն ծանր, ածխաթթով ու ջրածնով լիքը օդը, որի մէջ թրթուածնի տեղ լող են տալիս միլիօնաւոր միկրոպներ, և մէկ էլ տեսար ձմեռուայ կիսին յանկարծ. տի՛ֆ, կարմրուկ, աչքացաւ, կենդանիների ժանտախտ և այլն:

Ժողովուրդը ոչ թէ փաշտով, մինչև անգամ կենդանիների քակորից պատրաստած աթարով (ՅՅՅՅՅ) էլ սովորութիւն չունի մի առանձին սենեակ տաքացնելու իւր կեցութեան համար: Վառարան (ՈԵՅ) ասած բանի մասին ամբոխն հասկացողութիւն անգամ չունի: Ձմեռը նա տաքանում է կամ, ինչպէս ասինք, գոմերում, կամ թէ չէ թնդրի վրայ, իսկեամյու (քուրսի) տակ: Թնդրի բերանին դնում են քուրսին, ծածկում են մեծ կարպետով կամ ջեջիմով և ոտները ներս տարած, տաքանում են:

Որ գիւղական թնդիրները մի կողմից ժողովրդին մեծ ճառագուլութիւն են մատուցանում, կասկած չկայ: Գիւղացիք սովորութիւն ունին գարուն-ձմեռ ոտերը ներս կախել թնդիր, ժամերով նստել տաքանալ. իսկ ինչպէս յատնի է ոտքերի տաքանալը մեծ ազդեցութիւն ունի ստամոքսի կանոնաւոր գործելու վրայ:

Ժողովրդի նիստու կացը կարելի է ասել կատարում է գետնի վրայ, հողի երեսին. չունի աթոռ, չունի թաղթ, չունի գորգերով, կարպետներով ու օթոցներով փութած սենեակ. եթէ մի երկու բան

փուռւմ են էլ, այն էլ հիւրի համար. երբ հիւրը գնում է, նորից հաւաքում են: Ձունի զլխաւորը մահճակալ, մինչև անգամ չունի հասկացողութիւն այդ հասարակ, բայց անհրաժեշտ կարասու մասին, որը ինքը 2—3 կտոր տախտակից կարող էր շինել, չարմարացնել. նա քրնում է գետնի երեսին. գցում խտիլը (փսիաթ) հողի վրան, դրա վրայ դօշակը, վերմակը. իսկ տեղաշորը ցերեկը պահւում է սովորաբար տանը մի անկիւնում, խոնաւ պատի մօտ: Թէ որքան խոնաւութիւն են ծծում նրա ոսկորները՝ դրան ապացոյց այն բազմաթիւ անձերը, որոնք տանջւում են ճունների (ազդը) և կռների սզուից, և որոնցից շատերը վերջը հաշմանում են, կամ իրենց լեզուով ասած քիւղ (պնդամպուծ) դառնում, վէր ընկնում. և դա աւելի կանանց է պատահում, քան տղամարդկանց, շնորհիւ այն հանգամանքի, որ կանայք շարունակ տանն են անցկացնում իրենց կեանքը, հողէ յատակի վրայ:

Բնակարանների վատառողջութեան վրայ պէտք է աւելացնել և այն անմիտ սովորութիւնը, որ գետնի երեսը ջրջկնում են. երբ հարցնում ես պատճառը, պատասխանում են. «գետինը չ'չորանայ, հողը չքանդուի»:

Բնակարանների ցրտութիւնն ու խոնաւութիւնը ոչ միայն ներքեւից է և չորս շրջապատող պատերից. այլ վերեւից. հողածածկ կրտուրները անձրևի ժամանակ այնքան ջուր են ծծում, որ սկսում են կաթել ներքև. կաթիլքը վերջանալուց հողը պահում է իւր մէջ բաւական քանակութեամբ խոնաւութիւն, որ չետոյ մաս-մաս տալիս է օդին, փչացնում նրա մաքրութիւնը, իսկ երթիկներն այնքան փոքր են և նեղ, որ լոյս ու արևը շատ սակաւ են ներս մտնում, որի շնորհիւ ներսի օդի մէջ եղած բացիլներն բակտրիանները մնում են անպատիժ:

Հիւանդացած անհատը բնակարանի կողմից ոչ մի չարմարութիւն չունի բժշկուելու. երբ խօսեցնում ես բժշկին, ուսերը վեր է շարժում, ւսիրելիս, ոչ թէ հիւանդն առողջանալ, այլ մինչև անգամ առողջը չէ կարող առողջ մնալ, ինչ անէ դեղն ու դարմանը: Այս ժողովրդին փրկողը նրա երկաթէ առողջութիւնն է, պինդ կազմուածքը:

Մանուկներն ամբողջ օրերով առանց ներքնաշորի և գուլպաների ընկած են գետրներին վրայ. որի պատճառով ստամոքսի խանգարումից ոչ մի երեխայ ազատ չէ. շատերն ստանում են աղիքների բորբոքում, երիկամունքների բորբոքում և այլն. մի խնամք, որ տանում են նորածինների համար՝ դա օրօրոցի հոգացողութիւնն է, որը գուցէ այնքան առողջապահական պաշտանից չէ առաջացել, որքան օրօրելու համար, որ միջի երեխան չափրի, քնի, օրօրոցում պառկած երեխաների տակը չոր, բովրած տաք հող են փուռւմ. դա թէ չոր և

Թէ տաք է պահում երեխային, և դրա համար էլ քանի նա օրօրօր-
ցումն է՝ առողջ է և լաւ մարսում, իսկ երբ իջնում է օրօրօրցից, դառ-
նում է գետնակեաց, գետնի բաժին, չաճախ և գերեզմանի բաժին:

Օդի մասին հասկացողութիւն չունենալով, շատ աննախանձ գա-
ղափար ունի մարմնի ու շորի, նաև բնականի մաքրութեան
մասին: Սպիտակեղէնը փոխում է ուշ-ուշ, լուացքն անում են ամա
ռը սառը գետակներում ու գետերում, որի պատճառով ոջիլներն ու
նրանց ձուաները չեն ոչնչանում. և հէնց որ հագնում է գիւղացիին
այդ, իսկոյն տաքութեան մէջ զարգանում են ձուաներն և առատ
պարէն գտնում նրա ճարպոտ և իւղոտ մարմնի վրայ *):...

Դրա համեմատ է և մաքրութիւնը մարմնի, տեղաշորի, ձեռքերի,
ոտքերի, երեսի և այլն:

Կանայք համեմատաբար աւելի մաքրասէր են քան տղամարդիկ:
Կանայք սովորութիւն ունին զրեթէ ամիսը մէկ անգամ «տաշտը
դնել, զլուխ լուալ և որպէս զի երկար մազերի միջից անիծը (ոջիլի
բոժոժ) դուրս գալ, սոմ (փղոսկրէ) սանրի ատամները հուպ են տա-
լիս, մի քանի տեղից թելով կապում, արգար իւղ քսում, սանրում:

Անմաքրութեանը սաստիկ նպաստում է կենդանիների հետ միա-
տեղ ասրելը: Եւ մաքուր չեն ոչ միայն իրենք, այլ և կենդանիները:
Գարուն-ձմեռ կովը, հորթը, եզը. նոյն իսկ ձին ու ոչխարը ջրի երես
չեն տեսնում, չեն մաքրում. նրանց մաքրողը բնութիւնն է, անձիւր-
լոցացնում են և ձրթում միմիայն գոմէշներին, որոնք թէև մարմնով
կոպիտ են և ըստ երևույթին դիմացկուն. սակայն կազմուածքով շատ
քնքոյշ են. գոմէշը պահանջում է տաքութեան, մաքրութեան և
աննդի բաւականութիւն:

Եթէ պատահում է, որ քամի կամ փոթորիկ է բարձրանում,
ամբողջ գիւղը կորսում է Բոժի Իւլու Կուլ-Բուժէ հողի ու մոխրի
մէջ: Ինչու. Թնդիրներից դուրս բերած մոխիրը աճում են շարունակ
կտուրները, կենդանիների քակորը փողոցում չորանում, փոշի է դառ-
նում, դրանք ամեն անգամ պատրաստեն հողմի հետ պար գալու. իսկ
կալոցին երբ գիւղի չորս կողմը կալեր են քշում, թեղ է ընկնում, մանր
մղիկը դարմանի՝ մշուշի նման պատում է գիւղի հորիզոնը. և որքան
աչքացաւ է լինում այդ ժամանակ:

Մոխիրը պակաս չէ ազդում, այն՝ կնոջ թոքերի ու կրծքի
վրայ, որը դժբաղդութիւն ունի ամեն օր թնդիր վառելու. մոխրի
փոշին սիւնեքով դուրս վիժուելով ներքևից կեղտազարդում է հարսի

* Մի զզուելի սովորութիւն կայ. երբ հացը թխում վերջացնում են,
քանի թնդիրը գոլ է, հանում են անձերից շապիկները և թնդրի մէջ թափ
տալիս. պէտք է այնտեղ ներկայ լինել և լսել հազարաւոր ոջիլների ճրը-
ճրթոցը կրակի միջից...

աչք-երես, վերայ—գլուխ, թոք—կուրծք, Դրանից աւելի վատն է լինում, երբ սկսում է մնացած անթեղով աթարը մխացնել. կճու ճուխն առնում է աչքերը, արտասուքը վազում է, հազը բռնում, սակայն նա պէտք է վերջացնէ... Իսկ երբ վառուիլ է սկսում (դեռ բոցը չեղած), ճուխն, ինչպէս հրաբխից, դուրս վիժուելով թնդրից լցնում է ամբողջ տունը: Թանձր քուլաները, խիտ շերտերը խեղդում են օրօրոցում քնած մանկանը, անկիւնում կուչ եկած ծերին, անկողնում պառկած հիւանդին և այլն.

Եթէ այս բոլորի վրայ աւելացնենք և այն խոշոր հանգամանքը, որ արտաքնոց ասած բանը գոլութիւն չունի ո՛չ մի տեղ, այլ այդ բնական կարիքը հոգում են գոմերում, փողոցներում, իսկ կանաչք հաւանոցներում, որ վերջը դուրս են աճում կտուրները՝ պատկերը կատարեալ կլինի...

Եթէ պահում է ժողովրդին մի բան, դա ամառուայ արիւնքրտինք մտած աշխատանքն է, որ կազդուրելով գեղջուկին, ամեն բան դուրս է վանում քրտինքի հետ նրա միջից:

Ահա այսպէս է Ջաւախքի հայ դեղջուկի աւօրեայ նիստ ու կաջը:



ԱՄԱՆԵՂԷՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ



Ա. պ ա ճ ե յ ու եւ կ ր ե յ ու

Կարաս նկ. I, Տափ նկ. I, իւղի չինի նկ. I, փարջ. նկ. I, գղբւնոց նկ. IV, քուղա (գոյ) նկ. IV, տակառ նկ. IV, տաշտ նկ. VI, քարէ-գուռ IV, գուռ նկ. ԿԿ:

Բ. ե փ ե յ ու կ ա մ պ ա ս ր ա ս ե յ ու

Կճուճ նկ. I, Ապրի կճուճ նկ. I, բով նկ. I, պղինձ (կաթսայ) նկ. II, փարխաճ նկ. II, գիւգիմ նկ. II, թաւա նկ. II, եանաղ նկ. II, ջաւգա նկ. II, սառուոր նկ. II, հաց թխելու պարագաներ.—Թորոն նկ. IV, խոնչայ նկ. VII, բաթաթ նկ. VII, գրտնակ նկ. VII, ձախքաշ նկ. VIII, օխլաւի նկ. VII, թըթխմորաման նկ. VII, Սիլկի նկ. VII, հացի տաշտ նկ. VII, հետ ջրի աման նկ. VII, օջաղ նկ. VI, իւր պարագաներով.—քաւկիր նկ. III, չայնիկ նկ. III:

Գ. Մ ա ս ու ճ ա ճ ե յ ու

Իբրդ նկ. VII, լագեան նկ. VII, քրէդան նկ. III, թաս նկ. III, կուշ նկ. III, մորշուպ 2 տեսակ նկ. III, ջրի թաս նկ. III, լանգաւի 2 տեսակ նկ. III, սաֆ նկ. III, գութնի թաս նկ. III, մաթրատ կամ քեարսանկ նկ. III, սինի նկ. III, սալայ նկ. IV, աղթաս նկ. IV:

Կ ա ր ա ս ի ճ ե ր .

Էրեշտի դանակ նկ. V, ճրագ (ձիթի) նկ. V, նաւթի ճրագ նկ. V, Փառաշ նկ. V, աւել նկ. V, ճրագդիր նկ. V, Իսկեամիլի նկ. VIII, ամբար նկ. VIII, սնդուկ նկ. VIII, աթոռ նկ. VIII, տղի թընդիր նկ. VIII, ճռնիկ նկ. VIII, օրոցք նկ. VIII, լուացքի աթոռք *) նկ. VIII:

*) Սրա չորրորդ ստբբ արտանկարողը սխալմամբ բաց է թողել, գրանից չպէտքէ հետևցնել, թէ եռատանի է:

Մանօթ. ՍԽԱՆԵՐԸ ԿՎԱՐՆԵՐՈՒՄ

Մանօթ.	Սխալ.	Ուղիղ
նկ. III.	Մորշուպա.	Մորշուպա.
" "	Միթրադ կամ աւել.	Մաթրադ կամ սեռուռնի.
նկ. V.	Դեպան.	Դեպալ.
" "	աւ.	ալ.
նկ. VII.	Խոնչխտք	Խոնչի ոտք.
նկ. VI.	Սնկուացկալիս	Անկուացկալիս

Ն Կ Ը Ր Ն Ե Ր Ի Ց Ը Ն Կ Ը .

Նկ. I. կարաս, ծափ, իւղի ջինի, կճուճ, ապրի կճուճ, փարջ, բով, խուփ:

Նկ. II. պղինձ (կաթսայ), թանճարա (թ), զիւզիւմ (թ), փարխան (թ), թաւա (թ.) եամաղ (թ), ջուզա (թ.), իբրըղ (թ.) լազեան (թ.), լակնի դափաղ (թ.):

Նկ. III. քրեղան (քարղան), թաս, կուշ, մորշոպա (թ), մորշոպա (թ.), ջրի թաս, լանդաուի (թ.), քակիր, սաֆ, գուլթնի թաս, շաշնիկ, սառուոր, մաթբատ, սինի:

Նկ. IV. գդինոց, գզալ, շերեփ, աղթաս, սալա (թ.), քուզա (թ.), տակառ, տաշտ, քարէ-գուռ:

Նկ. V. Թ՛նդիր, խուփ (թ՛նդրի), խաչերկաթ, գեալպարի (թ.) սնկուացկայիչ, ակիշ, շիշ, թաթակիշ, շամփուր, օջաղ, մաշաչ, կասկարէք, սան:

Նկ. VI. չաւանք (այ և դիպակ.), սխտորաման, սխտորձեճիչ, գուռ, ակտի, թ՛նթոց, երկանք, էրեշտի դանաչ, ձիթի ճրագ, նաթի ճրագ, Ֆարաշ, աւել, ճրագդիր:

Նկ. VII. խոնչաչ, խոնչաչի ոտք, խոնչաչի դեառկիւ, բաթաթ, գրտնակ, ձախքաշ, օխլաւի, սիլկի (թ.) թթ խմորաման, հացի տաշտ, հէսջրի աման:

Նկ VIII. իսկեամլի (թ.) քուրսի, ամբար, դափաղ (ամբարի), աթոռք (աթոռ.), սնդուկ, տղի թ՛նդիր, ճուշիկ, օրոցք, լուացքի աթոռք (աթոռ.):

Ա. Պ Ա Ն Ե Լ Ո Ւ Ե Ի Կ Ր Ե Լ Ո Ւ

Կարճ և՛ I. Ա. Կարճ. 20 վ. $\times 11\frac{1}{2}$ վ. *) գործ է ածուում էրիշտա, կորկոտ, աղ, բուրդ և այլ այդպիսի իրեր պահելու համար: Սրանով երբեմն եփում են սինուկը (պանրից մնացած հեղուկը) և լոռ ստանում: Կարասի մէջ ձթում են և մէջը թուռշի պահում, կամ աղը դրած ուտելիքներ պահում ձմեռուաչ համար: Գրա մէջ պահում են և պանիր, որ կոչուում է աղջրի, իսկ ձմեռուան համար պինդ կոխում են թաց պանիրը, բերանը մոխրով ծածկում, բերնկար վաչը դնում, մոխրի մէջ պահում: այդպիսի ձևով պահում են և լոռ:

Կարասները շարում են թոնրատան շուրջը, բերաններին դնում երկար տախտակ, այդ տախտակի վրաչ շարում են մեծ կճուճներ, էլի տախտակ են դնում, և ապա (երրորդ շարք) մի շարք էլ փոքր կճուճ:

*) 20 վ. $\times 11\frac{1}{2}$ վ. — այն է, բարձրութիւնը \times լայնութեան վրայ:

ներ, փարջեր, մաղեր և այլն. Այդպիսի շարուածքը բռնում է տան երեք երեսը (պատը) և կազմում է թոնրատան կարասին՝ զարդը *):

Մ-դ. 4. I. 8. 4-րդ. 10¹/₂ վ. × 9 վ.

Սրա մէջ գեղջկուհին պահում է հալած (արդար) իւրը, հումն է նրա մէջ ածում խնոցում հարելու համար հաւաքում, շատ անգամ էլ սրա մէջ պահում է մեղրած սեր

Ի-դ. 2-րդ. 4. I. 9. 4-րդ. 11 վ. × 7 վ.

Ձինած է կաւ ից, միմիայն մէջը ապակիով պատած. որ պատերը հեղուկը ներս չծծեն. Այս ամանը գիւղացիք իրենք չեն կարողանում պատրաստել, այլ գնում են. Սրա մէջ պահում են հալած իւր, մեղրած սեր և այլն.

Փ-դ. 4. I. 2. 4-րդ. 6¹/₂ վ. × 4 վ.

Սրանով ապուր, մածուկ, չլպուր և այդպիսի կերակուրներ են արտը տանում արտուորին՝ Սա խուփ չունի, որի փոխարէնը հացը ծաղում են, կլորում, պինդ բերանը փակում:

Գ-դ. 2-րդ. 4. IV. 1, 4-րդ. 12 վ. × 6 վ.

Սրա մէջ պահում են գդալները. լինում է տախտակից, Սա քաշ են անում սիւնից կամ պատից:

Գ-դ. 4. IV. 2. 4-րդ. 5—6 վ.

Ձինած է հասարակ ձևով պինդ փայտից, Սրանով ուտում են:

Ձ-դ. 4. IV. 3, 4-րդ. 11 վ.

Սրանով կերակուր են ածում կնուճներից ամանները, կաթ են քաշում, կերակուր խառնում և այլն.

Թ-դ. 4. V. 7, 4-րդ. ✓

Սրանով կերակուրը եփած ժամանակ խառնում են, իսկ հարիսան երբ հանում են երեկոցեան թորոնից՝ զարնում են սրանով:

Ք-դ. (թ.) 4. IV. 6, 4-րդ. 9¹/₂ վ. × 7¹/₂ վ.

Այս դոսը շինած է բարակ և ճկուն տախտակից. սրանով ջուր են կրում աղբիւրից, կաթ են կրում կաթնետուն, կով, ոչխար, մատակ են կթում մէջը, կաթ են խապը տանում և այլն.

Գործ է ածում և տախտակներից շինած կիսատակառած և դոզը (վեդրո). բաց շատ սակաւ:

Քուղայի տակի խաչած և փոքրիկ նկարած իրը կոչում է Գե-ճի, որով ունկը միացնում են քուղին:

Ա-դ. (թ.) 4. V. 6. եր. 29 վ.

Սրա ծայրերից կախում են երկու քուղա և ջուր կրում տուն. շինում է պինդ և ճկուն փայտից

*) Մենք կաշխատենք Ալբոմիս վերջին մասում դնել զանազան տեսարաններ գիւղական կեանքից, իթիւս որոց և թոնրատունը իւր մասերով:

Տ-ի-ի, Կ. IV, 7, 4-րդից.

Փողովուրդին ասում է պոչիւ, առնում են դրսից, սա լինում է զա-
նազան մեծութեան: Մեծ տակառներով ձմեռը ջուր են կրում թէ տան-
գործածութեան համար և թէ կենդանիներին ջրելու համար, իսկ փոք-
րերով ամառը արտք ջուր են տանում ուսով կամ սալակի վրան բարձած:
Տ-ը, Կ. IV, 8, 4-րդից: 10 վ. \times 13 $\frac{1}{2}$ վ. \times 26 վ.

Ըինում են մալրի տախտակից: Սա լինում է երեք տեսակ. մեծ
տաշտ, կաթի տաշտ և գլխաւի: Մեծ տաշտի (որի չափը դրած է) մէջ
լողանում են և լուացք անում, կաթի տաշտի մէջ կաթ են փռում:
կաթ փոխի ժամանակ, իսկ գլխաւու մէջ գլուխ, ոտք են լուանում,
շատ անգամ էլ գործածում իբրև դիշերուայ աման:

Ք-ի-ի, Կ. IV, 9, քարից.

Փորած է քարից, գործ է ածւում ջուր պահելու համար, դնում
են գոմում կան թոնրատանը կամ բազում. եթէ գոմն են դնում
մէջը ջուր են պահում կենդանիներին ջրելու համար, իսկ եթէ թոն-
րատանը կամ բազում գործածութեան համար ջուր են պահում: Քարէ
գուռը լինում է զանազան մեծութեան, կաջ գուռ որ 1 $\frac{1}{2}$ սաժէն
երկարութիւն ունի և բաւականին թանգ արժէ:

Գ-ի-ի, Կ. V, 5, 4-րդից. 1—3 արշ. \times 8 վ.

Սա ևս նոյն ճառագութիւնն է մատուցանում ինչ քարէ-գուռը:
Լինում է զանազան երկարութեան: Սա պատրաստում են գերանից,
որի մէջ խնամքով փորում են: Այժմ գուռը շատ սակաւ է գործա-
ծւում, զի շուտ է փլանում և ջուրը հոտեցնում է:

Բ. ԵՓԵԼՈՒ-ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ.

Ա-ի-ի չափ, Կ. I, Է. 4-րդից *) 10 վ. \times 8 վ.

Սա գեղջկուհու ամենակարևոր անօթն է. սրանով նա ամեն ա-
ռաւօտ թորոնի վրայ ապուր է եփում, ճաշից չետոյ ապուրը դնում
թնդիլը երեկոյեան համար տաքացնում, մէջը ածիկ եփում և ալ.

Ս-ի-ի չափ, Կ. V 3, 4-րդից 4 վ. \times 3 վ.

Սրա մէջ սխտոր են ձեծում մախիս — ապրի և բանջարեղէնները
վրան ածելու համար:

Ս-ի-ի չափ, Կ. V, 4, 4-րդից, 4 $\frac{1}{2}$ վ.

Սրանով սխտորամանի մէջ ձեծում են սխտորը.

*) Ամանները կալից պատրաստում են այսպէս. կաւր ոտքերով լաւ
կոխում են, հասցնում, շաղախելիս սկզբից հետը խառնում են դում (մանր
աւազ), ապա շինում խեցեղէն ամաններ: Պաւը կոխելու համար կանչում
են աղջիկներ, որ գառնում է մաճու նման մի բան, (մաճին տես Արշտապի
մասին խօսելիս Գ. մասում):

ԿճՈՎ, ԿԻ. I. Գ. ԿՈՒՅ. $6\frac{1}{2}$ վ. \times 6 վ.

Սա ևս ապրի կճճի չափ կարևոր է գեղջկուհու համար, սրանով պատրաստում են ամեն տեսակ կերակուր թէ մտեղէն, թէ բանջարեղէն և թէ իւղեղէն:

ԽՈՒՔ. ԿԻ. I. Ը. ԿՈՒՅ. 5-6 վերջ:

Գործ է անում կարասի, կճճի և այլ այդպիսի ամանեղէնների բերանը ծածկելու համար. նայելով ամանի բերանի մեծութեան, ըստ այնմ էլ լինում է նրա մեծութիւնը:

ԲՈՒՔ. ԿԻ. I. Է. ԿՈՒՅ. 20 վերջ. երկ.

Կոտրած կարաս է, կամ յատկապէս այդ բանի համար շինած. դրանով թոնդրի վրան բովում են էրիշտա, խեծար. Տանտիկինը ապիշը կամ թաթակիշը ձեռին, մօտին նստած շարունակ խառնում բովուող էրիշտան կամ խեծաղը:

ՊԼԻՆՃ, ԿԻ. II. Ա. ԴՆՅՅԵ, 8 վ. \times 14 վ.

Պղինձ, կաթսայ. գործ է անում ջուր տաքացնելու, իւղ հալելու, դառւմա եփելու, մատաղ եփելու, հարսանիքին փլաւ, եայնի եփելու համար և այլն:

ՓՈՒՅՅ (Թ.) ԿԻ. II. Բ. ԴՆՅՅԵ. $5\frac{1}{2}$ վ. \times 12 վ.

Գրեթէ նոյն ճառագութիւնն է մատուցանում, ինչ կաթսան. շատ աղքատ ընտանիքներ, որոնք չունին կաթսայ՝ կառավարում են սրանով:

ԹՈՒՅՅՈՒՆ. (Թ.) ԿԻ. II. Գ. ԴՆՅՅԵ. $4\frac{1}{2}$ վ. \times 10 վ.

Սա էլ նոյն ճառագութիւնն է մատուցանում ինչ կաթսան և փարխածը, բայց սորանով բացի այդ պատրաստում են ջրխաշ, հասութա (Թ.) խաւիճ, բանջարեղէն և այլ այդ տեսակ կերակուրներ:

ԳԻՎԻՆ (Թ.) ԿԻ. II. Դ. ԴՆՅՅԵ. 7 վ. \times 5 վ.

Սրանով ջուր են եռացնում թէյ պատրաստելու համար. շատ անգամ էլ ամառը արտը ջուր են տանում:

ԹՈՒՆ (Թ.) ԿԻ. II. Ե. ԴՆՅՅԵ, 2 վ. \times $6\frac{1}{2}$. կոթը 8 վ.

Սրա մէջ տապակած են անում, ինչպէս կոտլէտ, խարխիլ, սրանով եփում են ձուագեղ, միւլու, հասութա, հալուա, զազլոխմասի (Թ.) բիշի, պատրաստում են սոխառած և այլն:

ԵՄԻՆ (Թ.) ԿԻ. II. Զ. ԴՆՅՅԵ. $2\frac{1}{2}$ վ. \times $2\frac{1}{2}$ վ.

Սրա մէջ սոխառած են անում և ծծկեր երեխայոց համար կաթ տաքցնում. գործ են անում և ջուր խմելու համար:

ԶՈՒՆ (Թ.) ԿԻ. II. Է. ԴՆՅՅԵ. $2\frac{1}{2}$ \times 4 վ. կոթը 6 վ.

Սրանով սուրճ են պատրաստում:

ՍՈՒՆՈՐ ԿԻ. III. ԿՈՒՅ. 4 վ. \times 8 վ.

Սրանով օրօրոցի երեխայի տակի համար հող են տաքացնում:

ԴԻՊՈՂ և ՄՆ (Թ.) միասին կոչում են հաւանք. ԿԻ. V. 12 վ. \times 5.

Սրա մէջ ճեծում են բովարձ սուրճը, մանրացնում փոշի անում, ապա շետիկով մաղում, մնացած խոշորն էլի ճեծում: Հաւանքը (սանդ) առնում են դրսից: Սրա անը (թ.) լինում է երկաթից.

Գույք. Կ. III 12. ԴձՅԷ. 2 վ. X 3 վ.

Սրանով թէյ են պատրաստում. ջուրը եռացնում են, թէյը գցում մէջը և առժամանակ թողնում կրակի վրայ մինչև թէյի դուրս տալը.

Գույք. Կ. III. 9. ԴձՅԷ. 4 վ. X 8 վ.

Սա գործ է ածուում խաշած բրինձ, էրիշտա, թաթարէօրակի և այլն քամելու համար. պատահում է, որ քաւկիրը շինում են և կաւից, որ շատ անցարմար է գործածութեան համար.

Հաց թխելու պարաւաններ՝ թորոն (ԲձԷԷ) Կ. VI. 1. Կույ. 28 վ. 19 վ.

Թորոնը կամ թնդիրը թաղած է թնդրափում (թորոտան վերի, բարձրադիր մաս). տակի բացուածքից տանում են գետնի տակով 1—1½ սաժէն երկարութեամբ խողովակ, որ կոչվում է սնկուածք, որովէս զի օդ բանի ներքեւից: Երբ թորոնի բոցը հանգչում է, տակը մնում է կրակի շեղջը՝ սնկուածքը կալում են սնկուածք կալիչով, որ տաքութիւնը շուտ չգընայ. Թորոնի շրթունքի ց փոսիկների վրան նստացնում են խաչերկաթը երեք մատով. (խաչերկաթի սուր ծայրը չէ հանգչում թորոնի շրթունքին. Խաչերկաթին շարում են ամանները կերակուր եփելու համար. Երբ թորոնի բոցը իջնում է՝ նրա մէջ հաց են թխում. թորոնի պարագաներն են. խուփ, խաչերկաթ, գեալպարի (թ.) սկուածկալիչ.

Խուփ. Կ. V, 2—3, Գույք. 6 վ. X 18 վ.

Սրանցով ծածկում են թորոնի բերանը, վրայից էլ ձգում կարպետ կամ մի ալ բան, որ տաքութիւնը մնայ.

Խուփալ. Կ. VI, 4. Երկուց. Կ.

Չինում են հաստ երկաթից. կարճ մատը պոչտ է գալիս երկար մատի վրայ մի մեխով, որով միացրած են կենդրոնից. Մեծութիւնը թնդրի բերանի չափով է լինում.

Գույք. (թ.) Կ. VI, 5. Երկուց, Կույք. կոթը 36 վ. երկ. 5 վ. X 6 վ.

Սրանով առաւօտները գեղջկուհին թնդիրը վառելուց առաջ դուրս է քաշում մոխիրը.

Մեծութիւն Կ. VI, 6. Կույք. 5 վ. X 6 վ.

Չուկերից պատրաստած գունդ, որով ծածկում են սնկուացքը.

Այլ. Կ. VI, 7. Երկուց երկ. 18 վ.

Սրանով խառնում են կրակը, կճուճը կոթից քաշ անում թնդիր, ինչպէս և հանում թնդրից, թորոնից հանում հացը, նրա թաթով թնդրի ափերը քերում աչրուած հացի մնացորդը.

Չէ, Կ. VI. 8. Երկուսն 24 վ. երկար.

Նոյն պաշտօնն է կատարում ինչ ակիշը, միայն սա աւելի երկար է. Սրա սուր ծալքով հանում են թորոնի տակից (շեղջի միջից) կուտ գնացած հացը *).

Թււակէ, Կ. VI, 9. Երկուսն. 8 վ.

Սրանով խմոր են կտրում հացի տաշտից մաս-մաս հանում, մաննները լուանալիս՝ նրանց ներսի մասը քերում մաքրում, թորոնից հաց հանում և ալն.

Չւփուր, Կ. VI. 10. Երկուսն. 16 վ. երկ.

Սրանով խորոված են անում, (Խորովածը Ջաւախէթում պատրաստում են թորոնի բոցերի մէջ).

Խաւայ, Կ. VII. 1. Գոյն. 6 վ. × 26 վ.

Ճինած 3 հատ իրար միացրած տախտակից, որ հանգչում են 2 ոտքերի վրան միացած գեառգիւով (տես 2—3 նկ. VII). սրա վրայ հաց են ուտում և հաց են թխում, նոյնպէս և կոխում են էրիշտի խմոր, թաթարբերակու խմոր ամաններ լուանում.

Բւթւթ, Կ. VII. 4. Գոյն. 16 վ. × 7 վ.

Բաթաթի կամ հացառի վրան գցում են գրդնակով բաց արած խմորը և խփում թնդրի շուրթը, Բաթաթի մի գլում արած է ճակ, ուր անցէկացնում քէչվանին իր բութ մատը և տակի 4 մատով բռնում բաթաթի ետեւից, Բաթաթի տախտակի և երեսի, որ լինում է հաստ կտորից, մէջը աճած է լինում խոտ. Ձատ անգամ բաթաթի ետեւի տախտակի փոխարէնը լինում է ուռերից գործած ձուածե իր.

Գրտու, Կ. VII. 5. Գոյն. 2 վ. × 10 վ.

Սրանով գունդ խմոր բարակացնում են և բաց շինում: Գրտնակները լինում են 2 տեսակ, հացի և նշխարքի. նշխարքի գրտնակն աւելի փոքր է լինում.

Ձախու, Կ. VII, 6. Գոյն. 2 վ. × 10 վ.

Գրտնակի ձևով, միմիայն ատամնաւոր. սրանով ձուածե բոկոնի երեսը փոսացնում են զոլերով, որպիսի տեսակը հացի տեղական բարբառով կոչւում է մատընքաշ. իսկ բոկոնի կլորը որի մէջը ճակ է, կոչւում է բիդայ.

Օրու, Կ. VII. 7. Գոյն. երկ. 10—18 վ.

Գրտնակով բաց արած խմորը սրանով աւելի են մեծացնում—բարակացնում, երբ պէտք է լինում զաթայ եփել, նշխարք պատրաստել և ալն.

Սէն (թ.) Կ. VII. 8. շինած է խոտից, որպիսի խոտը կոչւում է ճիլ.

*) Կուտ գնալ ասում են, երբ թորոնի շրթունքին խփած խմորը ընկնում է կրակի մէջ և ալնտեղ եփւում:

Սրանով մաքրում են խոնչան սուփրան վերնալուց կամ հացը թխելուց ետոյ՝ Սիլկին դիւղացու համար նոյն ճառայութիւնն է մատուցանում, ինչ խողանակը քաղաքացու:

ԹԵՐԻՆՈՐ ԳՐԱՆ. Կ՛. VII. 9. Գ՛ՅԻՅԵ. 8 վ. X 10.

Սրա մէջ խմորը պահում են ալիւրով թթուացնելու համար, նախապէս հետը հին թթւամոր խառնելով:

Հ՛ՅԻ ԳՐԱՆ. VII. 10 Գ՛ՅԻՅԵ. 8 վ. X 20 վ.

Փայտից փորած է և ունի կողոր ձև, որի մէջ հաց են հունցում *). Երեկոյց տանտիկինը ալրմաղով մաղում է ալիւրը հացի դաշտի մէջ, երեսին խաչ քաշում, որ «չարերը չմտենան», դաստառակով ծածկում, միւս առաւօտ եղկումեղկ ջրով շաղախում, հունցում, թողնում 2—3 ժամ մինչև գալը **), ապա սկսում են թխել:

Ա՛ՆԻՆՈՐ՝ նկարը չկայ. Սուրբական մաղի ձևով է, միմիայն տակի հիւսուածքը ձիւռ պոչի մաղից է: Ալրմաղի տեսակին է պատկանում և Կ՛ՐԻՆՈՐ ու Գ՛ՅԻՅԵ. Կաթ քամով կաթ են քամում, իսկ շետիկով նշխարքի ալիւր մաղում. Իսկ մաղերի միւս տեսակներն են. Զ՛ՊՈՐ, Գ՛ՅԻՅԵ, Ի՛ՊՈՐ. Բարակ փոկից հիւսած: Չատուարը ամենից մանր ծակոտիներ ունեցողն է, որով ցորենի փոշին և մանր որոմները բաժանում են, Ի՛ՊՈՐ՝ սովորական, որով կալում մաղում են նոր ստացած ցորենն ու զարին, աւելորդ բաներից մաքրում. իսկ քարմաղը ամենից մեծ ծակոտիներ ունեցողը, որով մաղում են խուշկի ***)) և այդ տեսակ բաներ:

ՀԵՊՐՈՐՆՈՐ. Կ՛. VII. 11. Կ՛ՅԻՅԵ. 8 X 5 վ.

Սրանով երեկոյց տանտիկինը ջուրը իջեցնում է թխդիր տաքանալու, որ միւս առաւօտ խմոր հունցէ: Այդ տաքացած ջրին ժողովորդն իւր բարբառով ասում է հեսջուր:

ՕՂԻ. Կ՛. VI. 11. քարից.

Որովհետև խօսեցինք թ որոնի և նորա պարազաների մասին, ուստի աւելորդ չհամարեցի այստեղ և խօսել օջաղի մասին, որովհետև սրա մէջ էլ թէչ են պատրաստում, երբեմն կերակուր եփում, ինչպէս միւլու, ձուածեղ, մսեղէն և այլն.

Սա շինում են օդաների պատերի մէջ. սրա մէջ միշտ գրեթէ կրակ է պահում, մանաւանդ առաջին ժամանակներում, երբ ձերերը սովորութիւն ունէին ներկելէ քաշելու ****).

Մ՛ՆՈՐ, Կ՛. VII, 12. երկէց. 8 վ. երկ.

*) Հունցելուն տեղական բարբառով ասում են հաց շաղուել:

**) Չեկած խմորին ասում են անեկ, որ գրական լեզուին չայտնի է բաղաճ բառով:

***)) Խուշկի կոչում է աթարից յառաջացած մանրուկներ, փոշին:

****) Արեւօք օջաղում կրակը շարունակ վառ պահելը հեթանոսական սովորութիւնից մնացած բան չէ:

Սրանով կրակ են խառնում, կրակ են վերցնում նէրկիլէյի համար
Կ-ի-բէ, Կ. VII. 13. Կ-ի-բէ, 6 վ.×7 վ.

Կասկարէքը եռոտանի է, սա այն յարմարութիւնն ունի, որ ուր
էլ որ լինի կրակ են չաղացնում, սա դնում են կրակի վրան և ձեռաց
կերակուր եփում:

Կ-ի-բէ, օջաղի, Կ. VII. 14. Կ-ի-բէ, երկ. 10 վ. բարձ. 5 վ.

2 հատ եռոտանի ձիաձև, երկու կողմի համար. դրանց վրան
նստեցնում են ամանը, որով օջաղի մէջ կերակուր են եփելու. սակայն
սա ամեն տուն չէ ունենում:

Ս-ճ. Կ. VII, 15. Կ-ի-բէ, 1 վ.×8 վ.

Սրա վրան նշխարք են թխում, երբեմն և փոքրիկ հացեր:

Մաշան, օջաղի կասկարէքները, սաճը օջաղի պարագաներ են.

Գ. Մ Ա Տ Ո Ւ Յ Ա Ն Ե Լ Ո Ւ

Իբրև և Կ-ի-բէ (թ.) Կ-ի-բէ, Կ. II. Բ. Թ. 16 վ.×12 վ.

Գործ են ածում լուացուելու համար հիւր եկած ժամանակ. իսկ
խուփը (Փ.) որ երբեմն ունենում է ծակոտիներ, դնում են լազանի
բերանին և կանթի տակի փոսիկում՝ սապոնը: Պատահում է, որ եր-
բեմն իբրով ջուր են կրում աղբիւրից, արտը ջուր են տանում: Կ-
գեանը շատ անգամ և ծառայում է իբրև դիշերուայ աման:

Այժմ շատ քիչ են գործածում իբրև լազեանը և գրեթէ
հետզհետէ նրանց գործածութիւնը վերանում է:

Գործ (Կ-ի-բէ) Կ-ի-բէ, Կ. III. 1.

Սրանով ուտում են ապուր, փլաւ, բանջար և այլն. լինում է
զանազան մեծութեան:

Թ-ճ, Կ. III. 2. Կ-ի-բէ.

Նոյն ծառայութիւնն է մատուցանում ինչ քրէզանը: Լինում է
զանազան մեծութեան:

Կ-ճ, Կ. III. 3. Կ-ի-բէ.

Նոյն ծառայութիւնն է մատուցանում, ինչ քրեղանը. կուշը
լինում է զանազան մեծութեան: Ժողովուրդը իւր բարբառով ասում
է Կ-ճ *

Մորթող (թ.) Կ. III. 4—5. Կ-ի-բէ.

Երկու ձևի, զանազան մեծութեան. Սրանցով ջուր են խմում:

Ջրի Բ-ճ, Կ. III. 6. Կ-ի-բէ.

Սրանով ջուր են խմում. լինում է զանազան մեծութեան:

* Ջաւախքի ժողովուրդը, ինչպէս և Զիրակի ու Սխալցխայի՝ շատ
տեղ բառի մէջ ու-ի փոխարէն գործ է ածում II (0-ի արտասանութեամբ), օր-
գլուխ՝ գլուխ, կուշ՝ կուշ, ունկ՝ ոնկ, և այլն.

Լաճապ, Կ. III. 7—8. ԳՆՅԵՅ.

Երկու ձևի, գանազան մեծութեան. սրանցով կերակուր են ուտում, քրեղանը, կուշը գործ են ածում լի օրերում, իսկ սրանք աւելի հիւր եկած ժամանակ:

Սաք, Կ. III. 10. Կ—ԵՅ.

Սրանով պանիր, լոռ, աղը դրած սիպեղ, ղմի և ալ ալ տեսակ չոր կերակուրներ են մատուցանում սեղանին: Երբեմն և փլաւ են ուտում: Ջանազան մեծութեան:

Մալուր Կ—Բ Կերպար, Կ. III, 14. Կ—ԵՅ.

Սրա մէջ խուս են դարնում, փոխինձ են խաշում և ալն. լինում է զանազան մեծութեան:

Գուրնի-Քուր, Կ. III. ԳՆՅԵՅ, 4 վ. × 6 վ.

Գուրնոցին դաշտում սրանով կերակուր են ուտում՝ ապուր, ջրխնած մածուն **) փլաւ և ալն.

Սիւն, Կ. III, 15. ԳՆՅԵՅ շՕ վերջ.

Սինին առաջ աւելի շատ էր գործ ածւում քան այժմ. սրանով հաց են տանում խոնչալի մօտ, նշանդրէքներին և հարսանիքներին նուէրները զնում են և տանում հարսնացուին կամ փեսային, ինչպէս՝ գաթալ, հալուաց, խորոված գառը, և ալն:

Սինիով ծածկում են պղնձի բերանը:

Պղձնկարգը ընդհանրապէս պահանջում է խիստ մաքրութիւն, բաց Ջաւախքում այնքան ուշուշ են կլայելում, որ շատ անգամ ժանդի մէջ փտում են ամանները, որից չաճախ առաջ է գալիս ստամոքսային հիւանդութիւն, մանաւանդ երեխայոց մէջ: Կլայելողները գալիս են դրսից, որովհետև ինքը դիւղական ժողովուրդը կլայելել չէ իմանում, անի, ասենք նա շատ բան չէ իմանում արհեստներից. մենք մի մասում «Ալբոմիս» որտեղ կիսօսենք արհեստների մասին՝ այնտեղ շատ տխուր էջերի կը պատահենք:

Սուլ (Թ.) Կ. IV. 5. 8—12 վերջ.

Գործում են ուռենու ձկուն ոստերից: Սրա մէջ հաց են դնում տանում խոնչալի մօտ, հացը դրած պահում են մառանում, շատ անգամ սրանով քամում են խաշած էրիշղա, բրինձ, կորկոտ, թաթարբերակի և ալն: Սրա մէջ շարում են չոր թան և դնում չարդախի տակ չորանալու:

Սալաները ինչպէս և մաղերը, ալմաղները, բաթաթի տակերը գործում են բոշաները:

Աղուր, Կ. IV. 4. Կ—ԵՅ. 4 վերջ.

*) Ջրով բաց արած մածնին, որի մէջ բրդում են և դրանքով ուտում՝ կոչում են ջրխնած մածուն:

Փորո՞ւմ են փաշտից, որ իւր բերանին ունենում է պտոյտ եկող կափարիչ: Զինում են նոյն ձևով և կաւից, միայն վերջինս կափարիչ չէ ունենում: Սակայն այժմ դրանք քիչ են գործածւում և քանի գնում վերանում են, որովհետև գործածւում են ապակեաց աղամաններ:

Գ. Կ Ա Ր Ա Ս Ի Ն Ե Ր

Կարասիների թիւն այնքան քիչ է և այնքան աննախանձ իրենց որակով, որ աւելորդ համարեցի առանձնացնել և դասերի բաժանել. աւելի լաւ համարեցի միացնել ամանեղէնների հետ և իբրև Դ գլուխ Թ մասի «Ալբոմիս»:

Իսկեօյէ (թ.) Կ. VIII, 1. Գոյոյե. 12 վ. X 23 վ.

Իսկեամլի կամ քուրսի շինում են փաշտից, ձմեռը, երբ թորոնի բոցը հանգչում է, կրակի շեղջը մեղմանում՝ նրա բերանը ծածկում են խուբերով, վերից դնում իսկեամլին, վրայից ծածկում կապերտով, և չորս բոլորը նստում տաքանում:

Քուրսու վրան շատ անգամ գեղջկուհին առաւօտը խմոր է հունցում, և ամաններ լուանում:

Աբուր Կ. VIII, 2. Գոյոյե.

Լինում է զանազան մեծութեան, երբեմն նոյն իսկ մի սենեակի չափ, բաժանում են 2, 3, երբեմն և չորս մասի, որոնց մէջ աճում են ցորեն, ալիւր և ալյն: Դնում են տանը մի արձակ տեղում: Վերևից ծածկում են տախտակներով: Երբ հարկաւոր է միջի աճածը հանել՝ բաց են անում դափաղը (3) և այնտեղից վազեցնում դուրս. իսկ նրա մէջ մթերքը աճելու համար դնում են փոքրիկ սանդուխ, շալակով ջուղաները բարձրացնում վերև, այնտեղից թափում մէջը:

Կայ ամբարի շատ փոքր տեսակը, որ քործ է աճում քէյվանին, նրա մէջ պահում է հաց, պանիր, իւր, մեղր և ալյն:

Սուրու. Կ. VIII, 4. Գոյոյե. 8 վ. X 20 վ. X 8 վ.

Զինում են քաղաքում, մեծ մասամբ Ախալցխայում, մաքուր փաշտից, շատ անգամ սալվի փաշտից (կեպարիսի տեսակը, որ անուշ հոտ ունի): Դրա մէջ գեղջկուհին պահում է իւր զգեստը, սպիտակեղէնը, զարդերը, երեխայոց շորերը և ալյն: Սնդուկը մեծ մասամբ իւղաներկով ներկած է լինում կոպիտ և անճաշակ նկարներով:

Սրա փոքրը կոչվում է չաքմաճա (թ.), որ աւելի տղամարդկանց համար է ծառայում, ուր պահում են թղթեր, փող, ծխախոտ, օղի և ալյն:

Թէ սնդուկը և թէ չաքմաճէն փակում են և միշտ բանալին մօտերը պահում:

Աբուր. Կ. VIII, 5. Գոյոյե. 10 վ. X 8 վ.

Աթու, որին ժողովուրդը աւելացրել է * տաւը վերջից 6 կամ երբեմն 8 կողմանի ձևով, կտրտուած նախշերով, սրա վրան գցում են փոքր մինտար (օթոց) և նստեցնում են եկած բարձրաստիճան հիւրին:

Ըատ քիչ ընտանիքներում է գտնուում այժմ սա:

Տախ Բարե. ն. VIII. 6. փայտից. 8 վ. × 8 վ.

Սրա մէջ կանգնեցնում են նոր ոտի կանգնող երեխային, որ խաղալ և մօրը ազատ թողնի գործ անելու:

Մանի. ն. VIII, 7. փայտից. 8 վ. × 10 վ.

Սրա թևի բարձր կողմից բռնում է նոր ոտք ելած երեխան և առաջ քշելով նրա օգնութեամբ ման գալիս:

Օրոց. ն. VIII. 8. փայտից. 15 վ. × 40 վ.

Օրոցքը, կամ օրորոցը գործ է ածուում երեխայոց համար իբրև մահճակալ, նրա տակը (ճաղերից վեր) հիւսած է ճլէ *) կեմով, որի վրան գցում են խոտիկուռը (խոտից պատրաստած ներքնակ) և ապա սփռում չարսաւ, մի բարձ և տղին բալուով դնում մէջը քնելու:

Օրորոցի տակի կիսաշրջանաձև տախտակները կոչուում են օրրան, երկու կիսալուսնաձև տախտակները (որոնք միանում են կամարով), կոչուում են դասնաղ, իսկ կամարից կախ արած խաղալիքը՝ չըխ-չըխ:

Օրորոցն օրորուելիս՝ նրա դասնաղների մէջ եղած ճիպտաների վրան հազցրած օղակները գնում գալիս շխլշըխկում՝ մօր նանիկի հետ օրօր են երգում նիրհող մանկանը:

Լուսայի ուրու. ն. VIII. 9. փայտից. 16 վ. × 10 վ.

Սրա վրան դնում են լուսացքի տաշտը և լուսացք անում: Սա ունի վերևում մէկ ցից միմիայն. այդ նրա համար է, որ հեշտ լինի տաշտը շուռ ու մուռ տալ լուսնալիս և կամ ջուրը թափելիս:

(Նկարիչը արտանկարելիս սխալմամբ բաց է թողել մի ոտքը և եռոտանի նկարել):

Յովհաննես Մալխասեան

*) Այլ, խոտի մլ պինդ տեսակն է. երբ խօրը նկարագրենք, ճլէ մասին կիսսենք:



U l u w l e w l w e